Հավելված
ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության
պետական հանձնաժողովի
2012 թվականի ապրիլի 27-ի թիվ 226-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2011 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2012թ.

Ներածություն

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 2011 թվականի տարեկան գործունեության հաշվետվությունը կազմվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) դրույթներին համապատասխան:

Հանձնաժողովի գործունեությունը նպատակաուղղված է եղել Օրենքով ամրագրված գործառույթների իրականացմանը, «Հանձնաժողովի 2011 թվականի տարեկան գործունեության ծրագրի», ինչպես նաև ռազմավարության եռամյա ծրագրի կատարմանը: Հանձնաժողովը 2011 թվականին շարունակել է աշխատանքներն՝ ուղղված ապրանքային շուկաներում Օրենքի հնարավոր խախտումների բացահայտմանը, կանխմանը և արգելմանը, սպառողների շահերի պաշտպանությանը և ձեռնարկատիրության զարգացմանը նպաստելուն: Հանձնաժողովն աշխատանքներ է իրականացրել նաև իր գործունեության հրապարակայնության ապահովման, պետական մարմինների, միջազգային կառույցների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության, Թվինինգ ծրագրով նախատեսված գործողությունների իրականացման, Օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից ենթաօրենսդրական ակտերի (կարգերի) ընդունման և կատարելագործման ուղղություններով:

Գլուխ 1. Համառոտ տեղեկատվություն Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ

Հանձնաժողովի աշխատանքների արդյունավետության բարձրացմանը էականորեն նպաստել են Օրենքում Հանձնաժողովի նախաձեռնությամբ և Համաշխարհային բանկի օժանդակությամբ օրենսդրական փոփոխությունների իրականացումը, որի արդյունքում վերացվել են օրենքում առկա բացերը, հստակեցվել են հիմնական հասկացությունները: Տնտեսվարող սուբյեկտների կողմից գնային չարաշահումների դեմ առավել արդյունավետ պայքար մղելու նպատակով օրենքում հստակ կարգավորում են ստացել գների չհիմնավորված բարձրացման, իջեցման և պահպանման հետ կապված հարաբերությունները: Փոփոխությունների արդյունքում Հանձնաժողովին տրամադրվել են լրացուցիչ գործիքներ՝ հնարավորություն ընձեռելով առավել արդյունավետ վերահսկել ապրանքային շուկաներում մրցակցային միջավայրը, բացահայտել տնտեսվարող սուբյեկտների կողմից տնտեսական մրցակցությունը խաթարող գործողությունները:

Մասնավորապես.

- Առավել հստակեցվել և խստացվել են մրցակցային օրենսդրության խախտումների համար նախկինում սահմանված պատասխանատվության միջոցները՝ համապատասխանեցնելով դրանք միջազգային չափանիշներին, ինչպես նաև սահմանվել են տուգանքների չափերի որոշման համար հիմք հանդիսացող սկզբունքները և չափանիշները:
- Ընդլայնվել են Հանձնաժողովի ապացուցողական կարողությունները՝ Օրենքում ամրագրելով դիտանցումներ և հսկիչ գնումներ կատարելու իրավասությունները:

- Օրենքը լրացվել է առևտրային ցանցերին վերաբերող մի շարք դրույթներով, որն էլ հնարավորություն կտա կանխարգելել և բացահայտել խոշոր առևտրային ցանցերի կողմից տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության հնարավոր խախտումները, դրանով իսկ խթանելով Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը:

2011 թվականին Հանձնաժողովի կողմից աշխատանքները տարվել են տնտեսվարող սուբյեկտների՝ մրցակցությունը սահմանափակող, կանխող կամ արգելող գործողությունների կամ վարքագծի ուսումնասիրության, տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտման հնարավոր դեպքերի քննարկման և որոշումների ընդունման, ապրանքային շուկաներում տնտեսվարող սուբյեկտների կողմից տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ուղղություններով:

Մասնավորապես, վերլուծվել են առավել կենտրոնացված ապրանքային շուկաների կառուցվածքը՝ որոշվել և գնահատվել է կենտրոնացվածության աստիճանը, մասնակիցների թիվը, գերիշխող դիրքի առկայությունը: Միաժամանակ, Օրենքի համապատասխան դրույթների լրացումը հնարավորություն ընձեռեց ուսումնասիրել առևտրային ցանցերի գործունեությունը, որոնք զբաղվում են սննդամթերքի, բենզինի, դիզելային վառելիքի, սալիկների և սանիտարական տեխնիկայի մանրածախ իրացմամբ, ինչպես նաև մի շարք դեղատնային ցանցերի գործունեությունը: Ուսումնասիրության արդյունքում 24 տնտեսվարող սուբյեկտներ (առևտրային ցանցեր) համարվել են գերիշխող դիրք ունեցող:

Հանձնաժողովի կողմից իրականացվող մշտական դիտանցումներին զուգահեռ որոշակի պարբերականությամբ ընտրանքային կարգով դիտանցումներ են իրականացվել առաջին անհրաժեշտության մի շարք ապրանքային շուկաներում՝ ձևավորվող գնային միտումների մասին օպերատիվ տեղեկատվություն ստանալու նպատակով: Դիտանցումներն իրականացվել են բենզինի, դիզելային վառելիքի, հացի, ալյուրի, մակարոնեղենի, բրնձի, արևածաղկի ձեթի, կարագի, շաքարավազի, կաթնամթերքի, մսի, հավի ձվի, սուրճի և այլ շուկաներում: Դիտանցումներն իրականացվել են Երևան քաղաքում ընդհանուր հարկման ռեժիմում գործող մանրածախ առևտրի առավել խոշոր օբյեկտներում: Հանձնաժողովի կողմից ապրանքների իրացման գների և պայմանների վերաբերյալ պարբերաբար իրականացվող դիտանցումներին մշտապես մասնակցել են նաև սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Բարձր կենտրոնացվածության աստիճան ունեցող ապրանքային շուկաներում գործող առաջատար տնտեսվարող սուբյեկտների գործունեության դիտանցման նպատակն էր ուսումնասիրությունների արդյունքում բացահայտել տնտեսվարող սուբյեկտների հնարավոր հակամրցակցային գործողությունները կամ վարքագիծը և

համապատասխան միջոցներով ուղղորդել մրցակցային իրավիճակն ապրանքային շուկաներում:

Մշտապես Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում է գտնվում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը՝ դրանց իրացման ծավալները և գների կառուցվածքը: Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության հիման վրա իրականացվում է գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների գործունեության վերահսկողություն:

Հանձնաժողովի կողմից հայտնաբերվել են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից չարաշահման և հակամրցակցային համաձայնությունների դեպքեր, որոնց առնչությամբ կայացվել են համապատասխան որոշումներ և կիրառվել են պատասխանատվության միջոցներ:

Ի տարբերություն նախորդ տարիների կտրուկ ավելացել է տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացումների քննարկման դեպքերը:

Հանձնաժողովը 2011 թվականի ընթացքում ուսումնասիրություններ է իրականացրել անբարեխիղճ մրցակցության դրսևորումների առնչությամբ և հանձնարարել տնտեսվարող սուբյեկտներին՝ դադարեցնել և հետագայում բացառել անբարեխիղճ մրցակցության արձանագրված դեպքերը: Անբարեխիղճ մրցակցության, սպառողներին մոլորության և շփոթության մեջ գցելու (այլ տնտեսվարող սուբյեկտին պատկանող ապրանքային նշանի օգտագործում կամ նմանակում, պարտադիր մակնշման բացակայություն, օրենսդրությանը հակասող/թերի մակնշում) հնարավոր դեպքեր են արձանագրվել կաթնամթերքի, երշիկեղենի և մի շարք այլ ապրանքների շրջանառության ոլորտներում: Նշենք, որ 2011 թվականին անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտված դեպքերը զգալիորեն ավելացել են նախորդ տարվա համեմատ, քանի որ ընդգրկել են անհամեմատ շատ ապրանքների շրջանառության ոլորտներ:

Հանձնաժողովը 2011 թվականին ընդունել է 603 որոշում, որից 23-ը վերաբերում են ապրանքային շուկաների ուսումնասիրությանը, 21-ը՝ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի վարքագծի ուսումնասիրությանը, 159-ը՝ անբարեխիղճ մրցակցության վերաբերյալ վարույթներին, 48-ը՝ համակենտրոնացումներին առնչվող հարցերին, 3-ը հակամրցակցային համաձայնությունների դեպքերին (գծանկար 1):

Մասնավորապես, 2011 թվականի ընթացքում Հանձնաժողովից առաքվել է շուրջ 3700 գրություն, մուտք է եղել շուրջ 6300 գրություն:

Համեմատելով 2008-2011 թվականների Հանձնաժողովի կողմից իրականացված աշխատանքները կարելի է փաստել, որ, եթե 2008 և 2009 թվականներին Հանձնաժողովը կայացրել էր տնտեսվարող սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելու 31-ական որոշումներ, ապա 2010 թվականին այդ ցուցանիշը կազմել է 107 որոշում, իսկ 2011 թվականի տվյալներով՝ 197 որոշում: Ինչ վերաբերում է կիրառված

ֆինանսական տուգանքների բացարձակ մեծություններին, ապա միայն 2011 թվականի ընթացքում տնտեսվարող սուբյեկտները հակամրցակցային գործողությունների համար տուգանվել են մոտ 351 միլիոն դրամի չափով, 2010-ի 37 միլիոնի, 2009-ի 10 միլիոնի և 2008-ի 9 միլիոնի համեմատ: 2011 թվականին պետական բյուջե մուծված տուգանքները կազմել են 229 միլիոն դրամ: Հարկ է նկատել, որ, ի տարբերություն նախորդ տարիների, Հանձնաժողովի 2010 և 2011 թվականներին կայացված և դատական կարգով բողոքարկված որոշումներից և ոչ մեկը վերջնական դատական ակտով անվավեր չի ճանաչվել, ինչը խոսում է կայացված որոշումների հիմնավորվածության, հետևաբար նաև Հանձնաժողովի գործունեության արդյունավետության մասին: Մասնավորապես, 2010 թվականին բողոքարկվել է Հանձնաժողովի թվով 28 որոշում, որոնցից 28-ով առկա է Հանձնաժողովի օգտին կայացված դատական ակտ, իսկ 2011 թվականին բողոքարկվել է Հանձնաժողովի թվով 20 որոշում, որոնցից 8-ով դատարանը վճիռ է կայացրել Հանձնաժողովի օգտին, մնացած գործերով դատավարությունը շարունակվում է:

գծանկար 1

Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումները ըստ ուղղությունների



գծանկար 2



գծանկար 3



2011 թվականին Հանձնաժողովը շարունակել է զանգվածային լրատվության միջոցներով լուսաբանել մրցակցության պաշտպանության բնագավառում տեղի ունեցող իրադարձությունները և այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Կազմակերպվել են մի շարք մամլո ասուլիսներ, տնտեսական մրցակցության պաշտպանությանն առնչվող հարցերով բազմաթիվ հարցազրույցներ: Հանձնաժողովն ակտիվացրել է մրցակցային օրենսդրության քարոզչությունը:

2011 թվականին անցկացվել է Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին կից հասարակական խորհրդի երկու նիստ, ինչպես նաև այդ շրջանակներում մի շարք քննարկումներ, որոնց ընթացքում քննարկվել են հասարակությանը հուզող հարցեր՝ կապված ապրանքային շուկաներում մրցակցային իրավիճակի հետ:

Դրա հետ մեկտեղ Հանձնաժողովը շարունակել է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների հետ սերտ համագործակցությունը: 2011 թվականին Հանձնաժողովը հաստատել և ընդլայնել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և արտերկրի համանման կառույցների հետ: Շարունակվել են Թվիննինգ ծրագրի շրջանակներում ընթացիկ աշխատանքները: Միջազգային կազմակերպությունների աջակցությամբ կազմակերպվել են սեմինարներ Հայաստանի Հանրապետության մարզերում մրցակցության օրենսդրության վերաբերող հարցերի շուրջ:

ՀՀ Ազգային Ժողով է ներկայացվել և հրապարակվել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2012 թվականի տարեկան գործունեության ծրագիրը:

Գլուխ 2. Ապրանքային շուկաների վերլուծություն

Հանձնաժողովը, 2011 թվականի ընթացքում, ի թիվս այլ աշխատանքների, իրականացրել է մի շարք ապրանքային շուկաների կառուցվածքի ուսումնասիրություն՝ հիմք ընդունելով նախորդ տարվա ուսումնասիրության ժամանակ առաջացած խնդիրները, գերիշխող դիրքի վերանայման վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտների դիմումները, գերիշխող դիրք ունեցող ընկերությունների լուծարվելու փաստերը:

Աղյուսակ 1

Ուսումնասիրված պարենային ապրանքային շուկաներում գործող տնտեսվարող սուբյեկտների թիվը

ՀՀ	Ապրանքային շուկայի անվանումը	Ապրանքային շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների թիվը
1	**2**	**3**
1.	«Հավի ձու՝ կճեպով»	6
2.	«Արդյունաբերական վերամշակման նպատակով ձեռքբերվող լոլիկ»	11
3	«Լուծվող սուրճ»	15
4.	«Հատիկավոր սուրճ»	9
5.	«Աղացած սուրճ»	9
6.	«Սուրճի հիմքով պատրաստի արտադրանք»	19
7.	«Արդյունահանվող հանքային ջուր»	3
8.	«Շշալցված աղբյուրի ջուր»	37
9.	«Շշալցված հանքային ջուր»	37
10.	«Բուսասերուցքային յուղերի խառնուրդներ՝ սփրեդ (յուղածո)»	17
11.	«Մարգարին»	26
12.	«Հավի միս»	15
13.	«Շաքարավազ»	5

«Հավի ձու՝ կճեպով» ապրանքային շուկայում 2010 թվականի չորրորդ եռամսյակում արտադրվել է 62 942 294 հատ ձու: Իրացման ծավալը նույն ժամանակահատվածում կազմել է 67 813 878 հատ ձու: Շուկայի մասնակիցների թիվը 6-ն է:

«Հավի ձու՝ կճեպով» ապրանքային շուկայում 2010 թվականի չորրորդ եռամսյակում ««Արաքս թռչնաբուծական ֆաբրիկա» փակ բաժնետիրական ընկերություն և «Երևանի թռչնաբուծական ֆաբրիկա» բաց բաժնետիրական ընկերություն» անձանց խմբի, «Լուսակերտի տոհմային թռչնաբուծական ֆաբրիկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Արզնու տոհմային թռչնաբուծական ֆաբրիկա» բաց բաժնետիրական ընկերության բաժինները կազմել են համապատասխանաբար 30 տոկոս, 29 տոկոս և 27 տոկոս: Նշված ընկերությունները միասին գրավում են շուկայի 86 տոկոսը՝ ավելի քան երկու երրորդը և յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող:

«Արդյունաբերական վերամշակման նպատակով ձեռքբերվող լոլիկ» ապրանքային շուկայում գործող թվով 11 տնտեսվարող սուբյեկտի կողմից Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության՝ 2010 թվականին արդյունաբերական վերամշակման նպատակով ձեռք է բերվել 15 631,57 տոննա լոլիկ:

«Արդյունաբերական վերամշակման նպատակով ձեռքբերվող լոլիկ» ապրանքային շուկայում 2010 թվականի ընթացքում ձեռքբերման առավել մեծ ծավալներ ունեցող երկու տնտեսվարող սուբյեկտներն են՝ «Արտաշատի պահածոների գործարան» բաց բաժնետիրական ընկերությունը՝ 62,60 տոկոս և «ՄԱՊ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 30,30 տոկոս բաժիններով:

«Արդյունաբերական վերամշակման նպատակով ձեռքբերվող լոլիկ» ապրանքային շուկայում «Արտաշատի պահածոների գործարան» ընկերությունը և «ՄԱՊ» ընկերությունը որպես ձեռքբերող ձեռքբերման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի ավելի քան մեկ երկրորդը՝ 92,90 տոկոս և յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող:

«Լուծվող սուրճ» ապրանքային շուկայում 2010 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածք ներկրվել է 31,9 տոննա լուծվող սուրճ:

«Լուծվող սուրճ» ապրանքային շուկայի իրացման ընդհանուր ծավալը 2010 թվականի առաջին կիսամյակի տվյալներով կազմել է 63,7 տոննա: «Լուծվող սուրճ» ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներն ունեցել են՝ «Մոկոնաթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 48,1 տոկոս, «Նյուֆորս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 30,3 տոկոս և «Մարսերալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 7,5 տոկոս բաժիններով: «Լուծվող սուրճ» ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներ ունեցող նշված երեք տնտեսվարող սուբյեկտները միասին գրավում են տվյալ շուկայի ավելի քան երկու երրորդը (85,9 տոկոս) և յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող:

«Հատիկավոր սուրճ» ապրանքային շուկայի իրացման ընդհանուր ծավալը 2011 թվականի առաջին եռամսյակի ընթացքում կազմել է 1193,73 տոննա: 2011 թվականի առաջին եռամսյակի ընթացքում Հայաստանի Հանրապետություն է ներկրվել 2 424,5 տոննա սուրճ: Իրացման ծավալներով առաջատար են «Կաֆե դյու Բրազիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 63,64 տոկոսը, «Գրանդ Քենդի» ՀՁ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 12,55 տոկոսը և «Վիվա Առգո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 9,47 տոկոսը: «Հատիկավոր սուրճ» ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներ ունեցող նշված երեք տնտեսվարող սուբյեկտները իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի ավելի քան երկու երրորդը (85,7 տոկոս) և յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող:

«Աղացած սուրճ» ապրանքային շուկայի իրացման ընդհանուր ծավալը 2011 թվականի առաջին եռամսյակի ընթացքում կազմել է 586,91 տոննա: Իրացման ծավալներով առաջատար են «Ալեքս-Գրիգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 37,31 տոկոսը, «Արմեն-Համիկ» ՀՁ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 19,88 տոկոսը և «Ռոյալ-Արմենիա» ՀՁ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 18.57 տոկոսը:

«Աղացած սուրճ» ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներ ունեցող նշված երեք տնտեսվարող սուբյեկտները իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի ավելի քան երկու երրորդը (75.77 տոկոս) և յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող:

«Սուրճի հիմքով պատրաստի արտադրանք» ապրանքային շուկայում 2010 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածք ներկրվել է 266,9 տոննա սուրճի հիմքով պատրաստի արտադրանք:

«Սուրճի հիմքով պատրաստի արտադրանք» ապրանքային շուկայի իրացման ընդհանուր ծավալը 2010 թվականի առաջին կիսամյակի տվյալներով կազմել է 277,9 տոննա: «Սուրճի հիմքով պատրաստի արտադրանք» ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալ ունեցել է անհատ ձեռնարկատեր Ասյա Արշակի Բաղդասարյանը՝ 81,2 տոկոս (225,6 տոննա) բաժնով, իրացման ծավալներով գրավել է տվյալ շուկայի ավելի քան մեկ երրորդը և համարվել է գերիշխող դիրք ունեցող:

«Արդյունահանվող հանքային ջուր» ապրանքային շուկայում ուսումնասիրությունն իրականացվել է 2009 թվականի երկրորդ կիսամյակի և 2010 առաջին ինը ամիսների տվյալների հիման վրա:

Ներկայացված տեղեկատվության համաձայն 2009 երկրորդ կիսամյակում հանքային ջուր են արդյունահանել թվով 7 տնտեսվարող սուբյեկտներ, իսկ 2010 առաջին 9 ամիսներին թվով 10 տնտեսվարող սուբյեկտ: Նշված ժամանակահատվածում արդյունահանված հանքային ջուր են իրացրել թվով 3 տնտեսվարող սուբյեկտներ՝ «Ադամանդ-Կ», «Վի Ընդ Էյ Տուր» և «Վայոց Ձոր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները:

Հայաստանի Հանրապետությունում 2009 թվականի երկրորդ կիսամյակում փաստացի արդյունահանվել է 19072,7 հազար լիտր, իսկ 2010 թվականի առաջին 9 ամիսներին՝ 24 334, 7 հազար լիտր հանքային ջուր: Արդյունահանված հանքային ջրի իրացման ծավալը 2009 թվականի երկրորդ կիսամյակում կազմել է 1 593,7 հազար լիտր, իսկ 2010 թվականի առաջին 9 ամիսներին 2328,5 հազար լիտր: «Արդյունահանված հանքային ջուր» ապրանքային շուկայում «Ադամանդ-Կ» և «Վի Ընդ Էյ Տուր» ընկերություններից յուրաքանչյուրը 2010 թվականի հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ի տվյալներով համարվել է գերիշխող դիրք ունեցող և միասին գրավում են տվյալ շուկայի ավելի քան երկու երրորդը՝ 92,78 տոկոսը:

«Շշալցված աղբյուրի ջուր» ապրանքային շուկայի ծավալներն ուսումնասիրվող ժամանակահատվածում ձևավորվել են տեղական արտադրության և ներկրման հաշվին:

2010 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածք է ներկրվել 174,7 հազար լիտր աղբյուրի ջուր և արտադրվել է 11113,5 հազար լիտր շշալցված աղբյուրի ջուր: «Շշալցված աղբյուրի ջուր» ապրանքային շուկայում 2010 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով Հայաստանի Հանրապետությունում թվով 37 տնտեսվարող սուբյեկտի կողմից իրացվել է 10550,1 հազար լիտր շշալցված աղբյուրի ջուր:

«Շշալցված աղբյուրի ջուր» ապրանքային շուկայում 2010 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով «ՄԳԱ Վոթըր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը համարվել է գերիշխող դիրք ունեցող 35,4 տոկոս բաժնով:

«Շշալցված հանքային ջուր» ապրանքային շուկայում 2010 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին թվով 10 տնտեսվարող սուբյեկտի կողմից

Հայաստանի Հանրապետության տարածք է ներկրվել 177,5 լիտր շշալցված հանքային ջուր: Նույն ժամանակահատվածում թվով 27 տնտեսվարող սուբյեկտի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրվել է 23014,1 հազար լիտր շշալցված հանքային ջուր և թվով 37 տնտեսվարող սուբյեկտի կողմից իրացվել է 15450,8 հազար լիտր շշալցված հանքային ջուր:

«Շշալցված հանքային ջուր» ապրանքային շուկայում 2010 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով իրացման առավել մեծ ծավալներ ունեցող երեք տնտեսվարող սուբյեկտներն են՝ «Ջերմուկ Գրուպ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 35,7 տոկոս, «Ջերմուկ մայր գործարան» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 31,1 տոկոս, «Բյուրակն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 8,3 տոկոս բաժիններով: Նշված երեք ընկերություններից յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք, միասին գրավել են տվյալ շուկայի ավելի քան երկու երրորդը՝ 75,1 տոկոս:

«Բուսասերուցքային յուղերի խառնուրդներ՝ սփրեդ (յուղածո)» ապրանքային շուկայի ուսումնասիրությունն իրականացվել է 2010 թվականի տվյալների հիման վրա: 2010 թվականին Հայաստանի Հանրապետություն է ներկրվել 1550,6 տոննա սփրեդ:

«Բուսասերուցքային յուղերի խառնուրդներ՝ սփրեդ (յուղածո)» ապրանքային շուկայում ընդհանուր իրացման ծավալը 2010 թվականի ընթացքում կազմել է 1765,8 տոննա: Իրացման ծավալներով առաջատար են «Արման ընդ պարտնյոր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որը զբաղեցնում է շուկայի ընդհանուր ծավալի 32,16 տոկոսը և «Բիո ֆուդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 19,63 տոկոսը: «Սփրեդ» ապրանքային շուկայում «Արման ընդ պարտնյոր» ընկերությունը և «Բիո ֆուդ» ընկերությունները յուրաքանչյուրը համարվել են գերիշխող դիրք ունեցող և միասին գրավում են տվյալ շուկայի 51,79 տոկոսը՝ ավելի քան մեկ երկրորդը:

«Մարգարին» ապրանքային շուկայում ընդհանուր իրացման ծավալը 2010 թվականի երկրորդ կիսամյակի և 2011 թվականի առաջին եռամսյակի ընթացքում կազմել է 5829,32 տոննա: 2010 թվականի երկրորդ կիսամյակի և 2011 թվականի առաջին եռամսյակի ընթացքում Հայաստանի Հանրապետություն է ներկրվել 4848,34 տոննա մարգարին:

Իրացման ծավալներով առաջատար են «Լիա-Կ Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որը զբաղեցնում է շուկայի ընդհանուր ծավալի 31,32 տոկոսը, «Ալեքս գրիգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 31,06 տոկոսը և «Էլիտա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 16,12 տոկոսը: Շուկայի մասնակից առաջին երեք ընկերություններից յուրաքանչյուրը համարվել են գերիշխող դիրք ունեցող և միասին գրավում են տվյալ շուկայի 78,5 տոկոսը՝ ավելի քան երկու երրորդը:

«Հավի միս» ապրանքային շուկայում ընդհանուր իրացման ծավալը 2011 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում կազմել է 13,18 հազար տոննա հավի միս: Հայաստանի Հանրապետություն է ներկրվել 12,18 հազար տոննա, արտադրվել է 1,71 հազար տոննա հավի միս:

«Հավի միս» ապրանքային շուկայում 2011 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում իրացման ծավալներով առաջին երեք տնտեսվարող սուբյեկտներն են «Ալեքս Գրիգ» ընկերությունը՝ 77,54 տոկոս, «Գետամեջի թռչնաֆաբրիկա»

ընկերությունը՝ 5,87 տոկոս և «Արաքս թռչնաֆաբրիկա» ընկերությունը 4,90 տոկոս: Շուկայի մասնակից առաջին երեք ընկերությունների բաժինը միասին կազմում է շուկայում ընդհանուր իրացման ծավալի 88.31 տոկոսը: «Ալեքս Գրիգ» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը «Հավի միս» ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող և որպես իրացնող գրավում է տվյալ շուկայի ավելի քան մեկ երրորդը՝ 77,54 տոկոս:

«Շաքարավազ» ապրանքային շուկայում 2011 թվականի առաջին եռամսյակի տվյալներով իրացվել է 20246,6 տոննա շաքարավազ: «Լուս աստղ շուգր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 2011 թվականի առաջին եռամսյակի ընթացքում արտադրել է 32162,7 տոննա և Հայաստանի Հանրապետությունում իրացրել է 20044,2 տոննա շաքարավազ:

Այսպիսով «Շաքարավազ» ապրանքային շուկայում 2011 թվականի առաջին եռամսյակի տվյալներով իրացման ծավալներով «Լուս աստղ շուգր» ընկերությունը համարվել է գերիշխող դիրք ունեցող և գրավում է տվյալ շուկայի ավելի քան մեկ երրորդը՝ 99 տոկոս):

Աղյուսակ2

Ուսումնասիրված ոչ պարենային ապրանքային շուկաներում գործող տնտեսվարող սուբյեկտների թիվը

ՀՀ	Ապրանքային շուկայի անվանումը	Ապրանքային շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների թիվը
1	**2**	**3**
1.	«Ազոտական պարարտանյութեր (ամոնիումային սելիտրա)»	11
2.	«Ամրան»	5
3.	«Ամրալար»	15
4.	«Գաջ»	3
5.	«Տանիքի թիթեղ»	2
6.	«Շարժական կապի գլոբալ համակարգի (GSM) ծառայություններ»	3

«Ազոտական պարարտանյութեր (ամոնիումային սելիտրա)» ապրանքային շուկայում գործող թվով 11 տնտեսվարող սուբյեկտների կողմից 2011 թվականի առաջին եռամսյակի ընթացքում Հայաստանի Հանրապետություն է ներկրվել 7,4 հազար տոննա ազոտական պարարտանյութ և իրացվել է 3,2 հազար տոննա պարարտանյութ:

«Ազոտական պարարտանյութեր (ամոնիումային սելիտրա)» ապրանքային շուկայում 2011 թվականի առաջին եռամսյակի ընթացքում իրացման առավել մեծ ծավալներ ունեցող երեք տնտեսվարող սուբյեկտներն են «Քեթրին Գրուպ» ընկերությունը՝ 30 տոկոս, «Ագրիմատկո Արմենիա» ընկերությունը՝ 24 տոկոս և «Մասիսի Բերրիություն» ընկերությունը՝ 22 տոկոս:

«Ազոտական պարարտանյութեր (ամոնիումային սելիտրա)» ապրանքային շուկայում 2011 թվականի առաջին եռամսյակի տվյալներով նշված ընկերություններից յուրաքանչյուրը համարվել են գերիշխող դիրք ունեցող և ձեռքբերման ծավալներով միասին գրավում են շուկայի ավելի քան երկու երրորդը՝ 76 տոկոսը:

«Ամրան» ապրանքային շուկայում գործող թվով 4 տնտեսվարող սուբյեկտների կողմից 2010 թվականի հունվարի 1-ից մինչև հուլիսի 31-ը Հայաստանի Հանրապետություն է ներկրվել 36 322,5 տոննա ամրան: «Ամրան» ապրանքային շուկայի իրացման ծավալը 2010 թվականի հունվարի 1-ից մինչև հուլիսի 31-ը կազմել է 33849,25 տոննա:

«Ամրան» ապրանքային շուկայում առավել մեծ իրացում ունեցող 3 տնտեսվարող սուբյեկտներից «Միկմետալ» ընկերության իրացման ծավալները կազմում են՝ 46 տոկոս, «Եվրոպա» ընկերությանը՝ 41,4 տոկոս և «Մետեքս» ընկերությանը՝ 7,1 տոկոս Շուկայի մասնակից առաջին երեք ընկերություններից յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող և միասին գրավում են տվյալ շուկայի 78,5 տոկոսը՝ ավելի քան երկու երրորդը:

«Ամրալար» ապրանքային շուկայում իրացման ծավալը 2010 թվականի հունվարի 1-ից մինչև հուլիսի 31-ը կազմել է 5 054,76 տոննա ամրալար: Նշված ժամանակահատվածում շուկայի մասնակից 5 տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկրվել է 6 468,24 տոննա ամրալար:

«Ամրալար» ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներ ունեցել են «Միկմետալ» ընկերությունը՝ 41,7 տոկոս, «Եվրոպա» ընկերությունը՝ 37,3 տոկոս և «Մետեքս» ընկերությունը՝ 6,9 տոկոս: Շուկայի մասնակից առաջին երեք ընկերությունները յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող և միասին գրավում են տվյալ շուկայի 85.9 տոկոսը՝ ավելի քան երկու երրորդը:

«Գաջ» ապրանքային շուկայի ծավալները ուսումնասիրվող ժամանակահատվածում արտահանման և ներկրման բացակայության պայմաններում ձևավորվել են տեղական արտադրության հաշվին:

«Գաջ» ապրանքային շուկայում 2010 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին թվով 3 տնտեսվարող սուբյեկտի կողմից արտադրվել է 29 858,3 տոննա գաջ) և իրացվել՝ 28687,6 տոննա ընդհանուր ծավալով:

«Գաջ» ապրանքային շուկայում 2010 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով իրացման առավել մեծ ծավալներ ունեցող երկու տնտեսվարող սուբյեկտներն են՝ «Գաջեգործ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 50,26 տոկոս, «Գաջ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 49,63 տոկոս բաժիններով:

«Գաջ» ապրանքային շուկայում 2010 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով իրացման առավել մեծ ծավալներ ունեցող 2 տնտեսվարող սուբյեկտները իրացման ծավալներով յուրաքանչյուրը համարվել են գերիշխող դիրք ունեցող և միասին գրավում են տվյալ շուկայի 99,89 տոկոսը:

«Տանիքի թիթեղ» ապրանքային շուկայի 2011 թվական առաջին կիսամյակի տվյալներով տանիքի թիթեղների իրացման ծավալները կազմել են 5,4 հազար տոննա: 2011 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Հայաստանի Հանրապետություն է ներկրվել 12,2 հազար տոննա տանիքի թիթեղ: Իրացման առավել մեծ ծավալներ ունեն «Սեմուր ընդ Կո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 46 տոկոս մասնաբաժնով, «Նարսան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 16 տոկոս մասնաբաժնով:

«Սեմուր ընդ Կո» և «Նարսան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններից յուրաքանչյուրը համարվել են գերիշխող դիրք ունեցող և միասին գրավում են տվյալ շուկայի 62 տոկոսը:

«Շարժական կապի գլոբալ համակարգի (GSM) ծառայություններ» ապրանքային շուկայում «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությունը համարվել է գերիշխող դիրք ունեցող:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նոր խմբագրությամբ 4-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է առևտրային օբյեկտ և առևտրային ցանց հասկացությունները՝

-առևտրային օբյեկտ է համարվում գույքային համալիրը (հողամաս, շենք, կառույց), որն օգտագործվում է իրացման ոլորտում ապրանքները վերջնական սպառողին հասցնելու համար,

- առևտրային ցանց է համարվում երկու կամ ավելի առևտրային օբյեկտների համախումբը, որոնք գտնվում են ընդհանուր կառավարման ներքո կամ գործում են միևնույն առևտրային նշանի կամ անհատականացման այլ միջոցի ներքո:

Միաժամանակ, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետով

- առևտրային ցանցը համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե հանդիսանում է չորս կամ ավելի առևտրային օբյեկտների համախումբ:

Մի շարք տնտեսվարող սուբյեկտների կողմից Հանձնաժողով ներկայացված իրենց կառավարման ներքո գտնվող կամ միևնույն առևտրային նշանի կամ անհատականացման այլ միջոցի ներքո գործող (այդ թվում՝ այլ տնտեսվարող սուբյեկտների կառավարման ներքո գտնվող) առևտրային օբյեկտների քանակների, գործունեության հասցեների, հեռախոսահամարների վերաբերյալ տեղեկատվության ուսումնասիրության արդյունքներով նրանցից յուրաքանչյուրի կառավարման ներքո է գտնվում չորս կամ ավելի առևտրային օբյեկտներ: Ուսումնասիրության արդյունքում 24 տնտեսվարող սուբյեկտներ (առևտրային ցանցեր) համարվել են գերիշխող դիրք ունեցող: 2011 թվականին Հանձնաժողովի կողմից գերիշխող դիրք ունեցող ճանաչված առևտրային ցանցերը ներկայացված աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Գերիշխող դիրք ունեցող առևտրային ցանցեր

ՀՀ	Առևտրային ցանցի անվանումը
Պարենային ապրանքների առևտրային ցանցեր	
1.	«Նոր Զովք» ՍՊԸ
2.	«Ալեքս Գրիգ» ՍՊԸ
3.	«ՍԱՍ-Գրուպ» ՍՊԸ
4.	«Ֆրեշ» ՍՊԸ
5.	«Սթար Դիվայդ» ՓԲԸ
6.	«Էվրիկա Գրուպ» ՍՊԸ
Բենզալցակայանների ցանցեր	
1.	«Ֆլեշ» ՍՊԸ
2.	«Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ
3.	«Ռան Օյլ» ՍՊԸ

4.	«Մաքսիուր» ՍՊԸ
5.	«Միկա Քորփորեյշն» ՓԲԸ
Դեղափների ցանցեր	
1.	«Նատալի ֆարմ» ՍՊԸ
2.	«Վագա Ֆարմ» ՍՊԸ
3.	«Էսկուլապ» ՍՊԸ
4.	«Նյու Ինտերնեյշնլ Բիզնես Ֆարմ» ՍՊԸ
5.	«Ամիկուս» ՍՊԸ
6.	«Ռիթմ Ֆարմ» ՍՊԸ
7.	«Ֆարմաֆակտ» ՍՊԸ
8.	«Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ
9.	«Արֆարմացիա» ՓԲԸ
Սալիկների և սանիտարական տեխնիկայի իրացման առևտրային ցանցեր	
1.	«Լիա-Կ Գրուպ» ՍՊԸ
2.	«Բարսիս» ՍՊԸ
3.	«Կոմֆորտ Ռ և Վ» ՍՊԸ
4.	«Իմէքս Գրուպ» ՍՊԸ

Գլուխ 3. Տնտեսական մրցակցության կարգավորման և վերահսկման ուղղությամբ իրականացված միջոցառումներ

Հանձնաժողովն իրականացրել է մի շարք միջոցառումներ մրցակցային օրենսդրության հնարավոր խախտումների հայտնաբերման և վերացման նպատակով, ինչպես նաև նախաձեռնել է կանխարգելիչ գործողություններ մի շարք ապրանքային շուկաներում տնտեսական մրցակցության վերահսկման գործընթացի շրջանակներում:

Հանձնաժողովը 2011 թվականին իր գործողությունները նպատակաուղղել է վերահսկելու հատկապես կենտրոնացվածության բարձր աստիճան ունեցող ապրանքային շուկաներում գործող տնտեսվարող սուբյեկտների վարքագիծը: Հանձնաժողովը մշտական վերահսկողություն է իրականացրել ոչ միայն ապրանքների արտադրությամբ, ներկրմամբ և իրացմամբ զբաղվող տնտեսվարողների, այլ նաև խոշոր առևտրային ցանցերի վարքագծի նկատմամբ, ինչի արդյունքում հնարավոր եղավ խուսափել դեկտեմբեր ամսին սոցիալական մեծ նշանակություն ունեցող ապրանքների գների կտրուկ աճից: Դեկտեմբեր ամսվա ընթացքում Հանձնաժողովն իրականացրել է ամենօրյա մոնիտորինգ՝ վերահսկելով գների փոփոխությունները, ինչպես նաև սպառողներին մոլորեցնելուն ուղղված գործողությունները: Այդ ընթացքում Հանձնաժողովը հայտնաբերել է մրցակցության օրենսդրության մի շարք խախտումներ, որոնց արդյունքում հարուցվել են վարչական վարույթներ և կիրառվել համապատասխան պատասխանատվության միջոցներ:

Տարվա ընթացքում ուսումնասիրվել է **«Հավի ձու՝ կճեպով»** ապրանքային շուկան, որի արդյունքում բացահայտվել է մրցակցային օրենսդրության խախտումներ և Հանձնաժողովի որոշմամբ շուկայում գերիշխող համարված «Լուսակերտի տոհմային թռչնաբուծական ֆաբրիկա» ընկերության նկատմամբ կիրառվել է համապատասխան պատասխանատվության միջոց: «Հավի ձու՝ կճեպով» ապրանքային շուկայում գների նկատմամբ հսկողության շնորհիվ կանխվել է Սուրբ Զատիկի և ամանորյա տոների կապակցությամբ հավի ձվերի գների աճը:

Հանձնաժողովի կողմից 2010 թվականի դեկտեմբերի վերջին բազմաթիվ առևտրի կետերում արձանագրվել էր հավի ձվի պակասորդ, իսկ որոշ կետերում նաև իրացման գների շեշտակի բարձրացում: Պակասորդի մասին էին վկայում նաև Երևան քաղաքի մի շարք առևտրի օբյեկտներում սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող «Սպառողների ասոցիացիա» հասարակական կազմակերպության հետ համատեղ իրականացված դիտանցումները, որոնց համաձայն 2010 թվականի դեկտեմբերի 24-ից 28-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքի մի շարք առևտրի օբյեկտներում ձու չէր եղել: Նշված ժամանակահատվածում առևտրի օբյեկտներում ձու չլինելու կամ այն քիչ ստանալու մասին տեղեկատվությունը Հանձնաժողով ստացել էր առևտրի օբյեկտներից:

Նշենք, որ 2010 թվականին Հայաստանի Հանրապետությունում արտադրված ձվի քանակը չէր նվազել՝ 2009 թվականին արտադրված ձվի քանակի համեմատ: Այսպես, համաձայն Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրության ծառայության տվյալների 2009 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետություն ներկրվել էր 260 000 հատ ձու, իսկ 2010 թվականի դեկտեմբեր ամսին համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական

եկամուտների կոմիտեի տվյալների, Հայաստանի Հանրապետություն էր ներկրվել 2049840 հատ ձու:

Հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ նախատոնական օրերին՝ 2010 թվականի դեկտեմբերի 23-ից 27-ն ընկած ժամանակահատվածում, «Լուսակերտի տոհմային թռչնաբուծական ֆաբրիկա» ընկերությունը, փաստացի ունենալով հավի ձվի զգալի պաշարներ՝ միջին օրական կտրվածքով 850 266 հատ, առևտրի օբյեկտներ կամ ընդհանրապես ձու չէր մատակարարել կամ մատակարարել էր պահանջվածից զգալի չափով պակաս քանակությամբ՝ ստեղծելով արհեստական պակասորդ, որի հետևանքով հնարավորություն էր ստեղծվել զգալիորեն բարձրացնելու հավի ձվի իրացման գները:

Հանձնաժողովը «Հավի ձու՝ կճեպով» ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող «Լուսակերտի տոհմային թռչնաբուծական ֆաբրիկա» ընկերության կողմից ապրանքները պահելու միջոցով «Հավի ձու՝ կճեպով» ապրանքային շուկայում պակասորդի ստեղծումը որակել է գերիշխող դիրքի չարաշահում և «Լուսակերտի տոհմային թռչնաբուծական ֆաբրիկա» ընկերության նկատմամբ նշանակվել է տուգանք՝ ընկերության 2009 թվականի հասույթի երկու տոկոսի չափով, որը կազմել է 87.98 միլիոն դրամ: Միաժամանակ, «Լուսակերտի տոհմային թռչնաբուծական ֆաբրիկա» ընկերությանը հանձնարարվել է հետագայում բացառել օրենքի խախտումները:

Հանձնաժողովը ընկերության կողմից ձվի իրացման փաստաթղթաշրջանառության ուսումնասիրության առաջարկությամբ՝ տեղեկատվությունը տրամադրել է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությանը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին:

Հանձնաժողովը, ինչպես և նախորդ տարիներին գների դիտանցումներ էր իրականացրել **«Ազոտական պարարտանյութեր (ամոնիումային սելիտրա)»** ապրանքային շուկայում:

2011 թվականի առաջին եռամսյակի տվյալներով ազոտական պարարտանյութի շուկայում գերիշխող են «Քեթրին գրուպ», «Ագրիմատկո Արմենիան» և «Մասիսի բերրիություն» ընկերությունները: 2010 թվականի մարտին այս ընկերությունների մոտ 1 պարկ (50 կգ) ազոտական պարարտանյութի ձեռքբերման գինը կազմել է 5600-5800, իսկ վաճառքի գինը՝ 6300-6500 դրամ: Իսկ 2011 թվականի մարտին նրանք պարարտանյութը ձեռք են բերել 6000-6200 դրամով և, ըստ ներկայացված փաստաթղթերի իրացրել 6800-7000 դրամով: Սակայն, Հանձնաժողովի կողմից իրականացված դիտանցման ընթացքում պարարտանյութի մանրածախ առևտրի կետերում արձանագրվել էր մինչև անգամ 10 հազար դրամ գին՝ 1 պարկի համար: Վերոնշյալի հիման վրա Հանձնաժողովը սահմանել էր հատուկ հսկողություն՝ պարարտանյութի վաճառքի գների նկատմամբ և վերահսկել, որպեսզի խոշոր ներկրողները 1 պարկ պարարտանյութի համար բարձր գին չսահմանեն: Ընդ որում այդ գները պետք է կիրառվեին ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ վաճառքի դեպքում: Փաստորեն, Հանձնաժողովի համապատասխան կանխարգելիչ միջոցառումների և դիտանցումների արդյունքում «Ազոտական պարարտանյութեր (ամոնիումային սելիտրա)» ապրանքային շուկայում արձանագրվել էր գների նվազում:

Հանձնաժողովն ուսումնասիրել է Թուրքիա-Հայաստան ուղղությամբ իրականացվող **բեռնափոխադրումների** ընթացքում տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը վերաբերող երևույթների առկայությունը:

2011 թվականի հունվարի կեսերից մի շարք խոշոր բեռնափոխադրողներ գրեթե կրկնակի բարձրացրել էին Թուրքիա-Հայաստան ուղղությամբ ապրանքների բեռնափոխադրման և մաքսազերծման ծառայությունների գները, ինչը հանգեցրել է վերոնշյալ ընկերությունների ծառայություններից օգտվող տնտեսվարող սուբյեկտների բողոքի ցույցերի: Համաձայն զանգվածային լրատվության միջոցներում տեղ գտած հրապարակումների՝ ծառայությունների թանկացումները կապված են եղել մաքսատուրքերի և մաքսավճարների բարձրացման հետ: Նշված հրապարակումների համաձայն՝ Երևանի մի շարք տոնավաճառների առևտրականներ խնդիր էին բարձրացրել մաքսատուրքի և մաքսավճարի ավելացման պատճառների պարզաբանման:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի պարզաբանման՝ Թուրքիայից և Չինաստանից ներմուծվող ապրանքների համար գանձվող մաքսային վճարների դրույքաչափերի, բեռների մաքսային ձևակերպումների գործընթացում որևէ փոփոխություն տեղի չէր ունեցել: Խնդրո առարկա ապրանքների (հագուստ, կոշիկ և այլն) ներմուծման մաքսային վճարները երբևէ չեն հաշվարկվել՝ ելնելով դրանց քաշից կամ ծավալից: Մաքսատուրքի և ավելացված արժեքի հաշվարկման հիմքը եղել և մնում է մաքսային արժեքը, որի հաշվարկման սկզբունքում նույնպես որևէ փոփոխություն չի կրել:

Իրականացված ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Թուրքիա-Հայաստան ուղղությամբ բեռնափոխադրումների ոլորտում գործունեություն են իրականացնում հիմնականում «Չորս ընկեր», «ՍՕՀՕ», «Նանիս», «Պրոֆ-իմպրոտեքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները, որոնց բաժինները միասին, մասնավորապես տղամարդու տաբատ, կանացի տաբատ, մանկական հագուստ և կանացի բլուզ ապրանքների 2010 թվականի չորրորդ եռամսյակի և 2011 թվականի առաջին եռամսյակի ընդհանուր ներկրման ծավալում կազմում են 97.73 տոկոս: Հետագայում ոլորտում միայն իրենց կողմից մատուցվող ծառայությունների փաստի մասին հավաստել էին նաև «Չորս Ընկեր», «ՍՕՀՕ», «Պրոֆ-Իմպրոտեքս», «Նանիս» ընկերությունների ներկայացուցիչները՝ Հանձնաժողովին ներկայացված հայտարարություններում:

Միաժամանակ, ընկերությունները հայտնել էին, որ 1 կիլոգրամ հագուստի բեռնափոխադրման համար նախապես հայտարարված 8 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի փոխարեն հաճախորդներից գանձվել է 6 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, իսկ ներմուծվող ապրանքները մաքսազերծվում էին թուրքական ընկերությունների կողմից տրված ապրանքագրերի հիման վրա, ապա հանձնվում հաճախորդներին: Նշված չորս ընկերություններից ոչ մեկը Հանձնաժողով չէր ներկայացրել իրենց կողմից իրականացվող բեռնափոխադրում-մաքսազերծում-պատվիրատուին հանձնում ծառայությունների գների բարձրացման պատճառները հիմնավորող փաստաթղթեր:

Տվյալ հանգամանքները փաստում էին այն մասին, որ բեռնափոխադրող ընկերությունների կողմից 2011 թվականի հունվարից տեղի է ունեցել բեռնափոխադրման գների բարձրացում: Փաստորեն, «Չորս Ընկեր», «ՍՕՀՕ», «Պրոֆ-

Իմպրոտեքս», «Նանիս» ընկերությունները, չունենալով բեռնափոխադրումների գների բարձրացման տնտեսական հիմնավորումներ՝ որոշակի ժամանակահատվածում՝ 2011 թվականի հունվար ամսին, համաձայնեցված դրսևորել են միևնույն վարքագիծը՝ բարձրացնելով Ստամբուլ-Երևան երթուղով հագուստի որոշ տեսակների՝ տղամարդու տաբատ, կանացի տաբատ, մանկական հագուստ և կանացի բլուզ ապրանքների բեռնափոխադրում-մաքսազերծում-պատվիրատուին հանձնում ծառայությունների գները՝ 4 ԱՄՆ դոլարից հասցնելով 6 ԱՄՆ դոլարի:

Հանձնաժողովը «Ստամբուլ-Երևան երթուղով հագուստի որոշ տեսակների՝ տղամարդու տաբատ, կանացի տաբատ, մանկական հագուստ և կանացի բլուզ ապրանքների բեռնափոխադրում-մաքսազերծում-պատվիրատուի հանձնում ծառայություններ» ապրանքային շուկայում «Չորս Ընկեր», «ՍՕՀՕ», «Պրոֆ-Իմպրոտեքս», «Նանիս» ընկերությունների կողմից որոշակի ժամանակահատվածում՝ 2011 թվականի հունվար ամսին գների չհիմնավորված բարձրացումը համարել է հակամրցակցային համաձայնություն և հակամրցակցային համաձայնություն կնքելու (կայացնելու, այդ համաձայնությանը մասնակցելու) համար նշված ընկերությունների նկատմամբ նշանակվել է տուգանք՝ ընդհանուր հարյուր միլիոն դրամի չափով: Նշված ընկերություններին հանձնարարվել է հետագայում բացառել օրենքի խախտումները:

«Ալֆա-ֆարմ» փակ բաժնետիրական ընկերությունը 2011 թվականին դիմել էր Հանձնաժողով՝ ներկայացնելով իր և այլ ընկերությունների միջև համալիր **ձեռնարկատիրական գործունեության (ֆրանչայզինգի) պայմանագրի** նախագիծը և կնքված մատակարարման պայմանագրի օրինակները՝ խնդրելով Հանձնաժողովի եզրակացությունը Օրենքի դրույթներին պայմանագրի համապատասխանության վերաբերյալ:

Հանձնաժողովը մանրամասն վերլուծելով պայմանագրի դրույթները, ամրագրեց, որ այն չի հակասում Օրենքի դրույթներին, բացառությամբ մեկ կետի, ըստ որի՝ օգտագործողը պարտավոր է պայմանագրով սահմանված նույնանման իրավունքներ ձեռք չբերել իրավատիրոջ մրցակիցներից: Նշված կետի դրույթի պահպանումը Հանձնաժողովի կողմից կարող էր դիտարկվել որպես հակամրցակցային համաձայնության դրսևորում՝ Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն:

2011 թվականին Հանձնաժողովը վարչական վարույթ է հարուցել **«Բաշխիչ ցանցերով էլեկտրական էներգիայի մատակարարում»** ապրանքային շուկայում: 2011 թվականի մայիսին քաղաք Երևանի Նոր Նորք վարչական շրջանի Մոլդովական և Բագրևանդ փողոցների միջանկյալ տարածքում գտնվող մի շարք բնակելի տների սեփականատերեր դիմել էին Հանձնաժողով: Դիմումում բնակիչները բողոքում էին իրենց թաղամասի բնակելի տներին էլեկտրամատակարարում չապահովելու համար: «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերությունը դիմումատուներին էլեկտրական էներգիայով ապահովելու հարցը հստակ կապել էր կառուցումը փաստացի ավարտված ենթակայանի շահագործման ընդունման աշխատանքների ավարտի հետ, չնայած մատակարարի պարտականությունն է եղել բնակիչներին էլեկտրական էներգիայով ապահովելը նաև հնարավոր այլընտրանքային աղբյուրներից:

Հաշվի առնելով վերոնշյալը, Հանձնաժողովն ամրագրել է, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերությունը, ունենալով մենաշնորհային դիրք «Բաշխիչ ցանցերով էլեկտրական էներգիայի մատակարարում» ապրանքային շուկայում, չի

կատարել իր պարտականությունը՝ դիմումատուներին օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չապահովելով էլեկտրական էներգիայով: «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության նման վարքագիծը, ըստ էության, հանդիսանում է օրենսդրությանը հակասող առևտրի պայմանների անուղղակի պարտադրում: Հանձնաժողովը «Բաշխիչ ցանցերով էլեկտրական էներգիայի մատակարարում» ապրանքային շուկայում մենաշնորհային դիրք ունեցող «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության վարքագիծը դիտարկել է որպես դիրքի չարաշահում:

Հաշվի առնելով, որ մինչև Հանձնաժողովի որոշում կայացնելը ընկերությունը շտկել էր խախտումը՝ կատարելով սպառողների նկատմամբ իր պարտականությունները Հանձնաժողովը որպես պատասխանատվության միջոց ընկերության նկատմամբ կիրառել է նախազգուշացում: Նշված որոշմանը նպաստել է այն փաստը, որ սպառողների իրավունքները լիովին վերականգնված էին, և, բացի այդ, Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում առաջին անգամ էր վարչական վարույթ հարուցում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության նկատմամբ:

Հանձնաժողովը ուսումնասիրությունների դաշտում է հայտնվել նաև «Շարժական կապի գլոբալ համակարգի (GSM) ծառայություններ» ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող «ԱրմենՏել» ընկերության կողմից իր բջջային ցանցից «Յուքոմ» ֆիքսված ցանց զանգահարելու համար 99 դրամ սակագնի սահմանման փաստը, որը խոչընդոտում էր շուկայում առողջ մրցակցային մթնոլորտի ձևավորմանը:

«Յուքոմ» ընկերությունը դիմել էր Հանձնաժողով՝ հայտնելով, որ «ԱրմենՏել» ընկերությունն իր բջջային ցանցից դեպի «Յուքոմ» ընկերության ֆիքսված ցանց զանգերի համար սակագինը սահմանել է 99 դրամ բոլոր սակագնային պլանների դեպքում, մինչդեռ «ԱրմենՏել» ընկերության բջջային ցանցից «ԱրմենՏել» ընկերության ֆիքսված ցանց սակագինը սահմանվել է համապատասխանաբար՝ 29,99 դրամ, 39 դրամ և 59 դրամ, կախված սակագնային պլանից, ինչն առաջացնում է «Յուքոմ» ընկերության գործող և պոտենցիալ բաժանորդների արդարացված դժգոհությունը և մեծապես խոչընդոտում է «Յուքոմ» ընկերության հեռախոսային ծառայությունների ընդլայնմանը՝ ստեղծելով արհեստական պատնեշ «Յուքոմ» ընկերության և վերջնական սպառողի միջև: Հանձնաժողովն իր ուսումնասիրության արդյունքում ամրագրեց, որ «ԱրմենՏել» ընկերության վերը նշված վարքագծի հետևանքով «Յուքոմ» ընկերությունը կարող է դուրս մղվել ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների մատուցման շուկայից, որտեղ «ԱրմենՏել» ընկերությունն ունի որոշիչ ազդեցություն՝ հասույթը կազմում է շուկայի ընդհանուր հասույթի մոտ 98 տոկոսը, իսկ բաժանորդների քանակը կազմում է շուկայի 99 տոկոսը: Այսինքն, «ԱրմենՏել» ընկերությունը, օգտագործելով իր գերիշխող դիրքը «Շարժական կապի գլոբալ համակարգի (GSM) ծառայություններ» ապրանքային շուկայում, փորձել է ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների մատուցման շուկայից դուրս մղել նրա մրցակից հանդիսացող «Յուքոմ» ընկերությանը:

«ԱրմենՏել» ընկերությունը գրությամբ դիմել է Հանձնաժողով՝ նշելով, որ հաշվի առնելով «Յուքոմ» ընկերության դժգոհությունը և Հանձնաժողովի որոշումը, «ԱրմենՏել» ընկերությունը վերանայել է իր կողմից վարած սակագնային քաղաքականությունը և սեպտեմբերի 9-ից շարժական ցանցից դեպի այլ

օպերատորների ամրակցված ցանցեր կատարվող զանգերի համար սահմանել է և կիրառել է միասնական սակագներ: «ԱրմենՏել» ընկերությունը միջնորդությամբ դիմել է Հանձնաժողովին և տեղեկացրել, որ նախորդ որոշումներով ամրագրված խախտումներն ամբողջովին վերացվել են, ինչը նշանակում է, որ ընկերությունն ըստ էության ընդունում է այն փաստը, որ իրավախախտում է կատարել: Հանձնաժողովի կողմից «ԱրմենՏելի» նկատմամբ տուգանք սահմանող նախորդ 2 որոշումները, որոնցից մեկը կայացվել է գերիշխող դիրքի չարաշահման և մյուսը՝ անբարեխիղճ մրցակցության գործողության վերաբերյալ վիճարկվել էին դատական կարգով: Սակայն ընկերությունը տեղեկացրել է, որ հրաժարվում է բոլոր դատական հայցերից և պատրաստակամ է վճարելու տուգանքները: Արդյունքում, Հանձնաժողովի 2 որոշումներով «ԱրմենՏել» ընկերությունը պետական բյուջե կվճարի 100 միլիոն դրամ գերիշխող դիրքի չարաշահման և 500 հազար դրամ՝ անբարեխիղճ մրցակցության համար: Հաշվի առնելով վերը նշվածը, գերիշխող դիրքի չարաշահման համար «ԱրմենՏել» ընկերությանը տրվել է նախազգուշացում և խախտումները հետագայում բացառելու հանձնարարություն:

Հանձնաժողովը իրականացրել է ուսումնասիրություն **«Լուծվող սուրճ»** ապրանքային շուկայում և «Մոկոնաթ» ընկերությանը «Լուծվող սուրճ» ապրանքային շուկայում համարել է գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաև ընկերությունում իրականացվել է վերջինիս կողմից ներկայացված տեղեկատվության հավաստիության թեմատիկ ստուգում, որի արդյունքում պարզվել է, որ առկա են դեպքեր, երբ ընկերությունը լուծվող սուրճը տարբեր տնտեսվարող սուբյեկտների իրացրել է էականորեն տարբերվող, իսկ որոշ դեպքերում՝ ինքնարժեքից զգալիորեն ցածր գներով:

Համաձայն ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի, լուծվող սուրճի ձեռքբերման գինը կազմել է 820 դրամ, սակայն վաճառքն իրականացրել է գնման գնից անհամեմատ ցածր արժեքով՝ 620 դրամով: Այս գործելաոճով շուկայում առաջատար դիրքերի հասնելով, ընկերությունը կտրուկ փոխել է իր վարքագիծը և վարել է հակառակ քաղաքականությունը. Նույն 820 դրամով ձեռք բերված սուրճը վաճառել է քառակի անգամ թանկ՝ 3300 դրամով: Նման վարքագիծը Հանձնաժողովը որակել է գերիշխող դիրքի չարաշահում և գերիշխող դիրքի չարաշահման համար «Մոկոնաթ» ընկերության նկատմամբ նշանակվել է տուգանք 20 միլիոն դրամի չափով:

Միաժամանակ, ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է նաև, որ ապրանքի ձեռքբերման և վաճառքի գները ակնհայտորեն չեն համապատասխանում իրական շուկայական գներին, ինչի հետ կապված բոլոր նյութերն ուղարկվել են ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Գեղարքունիքի մարզի բնակիչների, ինչպես նաև լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա, Հանձնաժողովը ուսումնասիրել է **Երևան-Գավառ-Երևան** երթուղու գործունեությունը: Երևան-Գավառ-Երևան երթուղով ուղևորափոխադրում իրականացնող «Գավառտրանս» ընկերությունը, լիցենզիաների տրամադրման մրցույթում նշված երթուղու ուղետոմսի համար առաջարկել է 500 դրամ արժեք, շահել է մրցույթը, սակայն, փաստացի ուղևորափոխադրումներ է իրականացրել 1000 դրամով: Իր վարքագծով ընկերությունը խոչընդոտել է առավել

բարեխիղճ ընկերությունների մուտքը նշված շուկա, քանի որ մրցութային փաթեթում առաջարկել է անհամեմատ ցածր գին, ինչի շնորհիվ էլ ընկերությունը շահել է մրցույթը:

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունից ստացված տեղեկատվությունից պարզվել է, որ «Գավառտրանս» ընկերությունը միաժամանակ հաղթել է երկու մրցույթում՝ Երևան-Գավառ-Երևան չվերթը՝ թիվ 303 երթուղով, տոմսի արժեքը՝ 500 (հինգ հարյուր) դրամ և Գավառ-Երևան-Գավառ չվերթը՝ թիվ 326 երթուղով, տոմսի արժեքը՝ 1000 (հազար) դրամ:

«Հայավտոկայարան» ընկերությունը ևս տրամադրել է տեղեկատվություն Հանձնաժողովին՝ նշելով, որ Երևան-Գավառ-Երևան երթուղին (թիվ 303) շահագործվում է սկզբնակետի և վերջնակետի խախտումով՝ չներկայանալով «Հյուսիսային» և «Գավառի» ավտոկայարաններ: Բացի այդ, «Հայավտոկայարան» ընկերությունը գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել պահանջված տեղեկատվությունը՝ նշելով, որ «Գավառտրանս» ընկերության սպասարկմանը հանձնված թիվ 326 միկրոավտոբուսային երթուղին սպասարկվում է «Հայավտոկայարան» ընկերության կողմից, և նշված երթուղու համար կատարվում է ուղետոմսերի վաճառք: Իսկ «Գավառտրանս» ընկերության սպասարկմանը հանձնված թիվ 303 միկրոավտոբուսային երթուղին չի ներկայանում «Հայավտոկայարան» ընկերության «Հյուսիսային» և «Գավառի» ավտոկայարաններ, ուստի երթուղու սպասարկում և ուղետոմսերի վաճառք նշված երթուղու համար չի կատարվում:

Փաստորեն, «Գավառտրանս» ընկերությունը, հաղթելով Երևան-Գավառ-Երևան երթուղու (թիվ 303) կապակցությամբ անցկացված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթը, ուղետոմսի համար առաջարկելով 500 դրամ փոխադրավարձ, փաստացի չի կատարել ուղևորափոխադրումներ վերը նշված երթուղով:

Նշենք, որ ընկերությունը ստացել է նաև Երևան-Սարուխան-Երևան (թիվ 313) և Գավառ-Երևան-Գավառ (թիվ 326) երթուղիների շահագործման իրավունքը և փաստացի կատարում էր ուղևորափոխադրումներ՝ կիրառելով մրցույթում առաջարկված ուղետոմսի փոխադրավարձը՝ 1000 դրամ: Այսպիսով, «Գավառտրանս» ընկերությունը չի սպասարկել Երևան-Գավառ-Երևան (թիվ 303) երթուղին և ուղևորափոխադրումներն իրականացրել է օրենսդրությանը հակասող առևտրի պայմանների անուղղակի պարտադրմամբ: Բացի այդ, Ընկերությունը Երևան-Գավառ-Երևան երթուղու (թիվ 303) կապակցությամբ անցկացված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթում առաջարկելով 500 դրամ ուղետոմսի համար և հետագայում փաստացի չիրականացնելով ուղևորափոխադրումներ ուղետոմսի այդ գնով, այլ տնտեսվարող սուբյեկտների զրկել է Երևան-Գավառ-Երևան երթուղու (թիվ 303) մրցույթին ողջամիտ պայմաններով մասնակցելու և մրցույթը հաղթելու հնարավորությունից, ինչն էլ հնարավորություն է տվել Ընկերությանն ազատորեն թելադրելու իր պայմանները Երևան-Սարուխան-Երևան (թիվ 313) և Գավառ-Երևան- Գավառ (թիվ 326) երթուղիների շահագործման ընթացքում:

Հանձնաժողովի որոշմամբ տնտեսվարողի նման վարքագիծը որակվել է որպես գերիշխող դիրքի չարաշահում, որի համար ընկերության նկատմամբ նշանակվել է 10 միլիոն դրամ տուգանք: Հանձնաժողովը «Գավառտրանս» ընկերությանը հանձնարարել է հնգօրյա ժամկետում վերացնել խախտումը, հակառակ դեպքում հրաժարվել լիցենզիայից: Հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրության ողջ փաթեթը ուղարկվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն: Հետագայում ընկերությունը հրաժարվել է լիցենզիայից:

Հանձնաժողովը 2011 թվականին ուսումնասիրել է տնտեսվարող սուբյեկտների վարքագիծը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսվարող սուբյեկտների կողմից խախտումները հաճախակի դրսևորվում են հիմնականում գների բարձրացմամբ կամ բարձր սահմանմամբ: Համաձայն զանգվածային լրատվության միջոցներում տեղ գտած հրապարակումների, «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությունը հունիս-հուլիս ամիսներին բարձրացրել էր դեպի Վրաստան կատարվող **ուղևորափոխադրումների** տոմսերի գները: Ուսումնասիրությունների ընթացքում անդրադարձ է կատարվել միջազգային մի շարք պայմանագրերի և պարզվել է, որ նշված ընկերության գնային բարձրացումը պայմանավաճ էր բազային սակագնի փոփոխմամբ, ինչպես նաև շվեյցարական ֆրանկի փոխարժեքի բարձրացմամբ, հաշվի առնելով, որ միջազգային ուղևորափոխադրումների սակագները, ըստ միջազգային համաձայնագրերի, հաշվարկվում են այս տարադրամի հիման վրա:

Համակենտրոնացման պետական վերահսկողությունը միտված է մրցակցային միջավայրի վատթարացման արգելմանը: Այդ պատճառով էլ միացումների, միաձուլումների և ձեռքբերումների առավել խոշոր գործարքներն իրականացվում են միայն Հանձնաժողովի թույլտվությամբ: Համակենտրոնացման դեպքերի ուսումնասիրության նպատակով Հանձնաժողովի կողմից 2011 թվականին հարուցվել է 24 վարչական վարույթ: Վարչական վարույթների զգալիորեն աճը նախորդ տարիների համեմատ պայմանավորված է տնտեսվարող սուբյեկտների կողմից իրավագիտակցման բարձրացման և Հանձնաժողովի գործունեության քարոզչության ընդլայնումով: Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության հիման վրա տարվա ընթացքում կատարվել են ուսումնասիրություններ Օրենքի հնարավոր խախտումների՝ տնտեսվարող սուբյեկտների միացումների, միաձուլումների, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի փայաբաժնի ձեռքբերումների և այլ միավորումնրի վերաբերյալ: Վարչական վարույթների շրջանակներում Հանձնաժողովի կողմից գրություններ են ուղարկվել տնտեսվարող սուբյեկտներին, կատարված գործարքների և գործողությունների վերաբերյալ բացատրություններ և պարզաբանումներ ստանալու նպատակով: Հանձնաժողովը կայացրել է համակենտրոնցումների առնչությամբ թվով 26 որոշումներ:

2011 թվականին Հանձնաժողովն ընդունել է անբարեխիղճ մրցակցության դեպքերն արձանագրող 71 որոշում: Ընդ որում, դեպքերի գերակշիռ մասը (41 դեպք) կազմում են տնտեսվարող սուբյեկտների կողմից իրացվող ապրանքների մակնշման կանոնների և պայմանների պահպանման խախտմանը: Մյուս հաճախ հանդիպող դեպքերից են ապրանքների կեղծումը (տվյալ ապրանքի արտադրության ընթացքի խախտում) և ապրանքի փաստացի որակական ցուցանիշների անհամապատասխանությունը իր մակնշման տվյալներին (23 դեպք): Բացի այդ

բացահայտվել են այլ տնտեսվարող սուբյեկտի ապրանքային նշանի օգտագործման 7 դեպք, իրացվող ապրանքում օտար բաղադրիչների առկայության՝ 5 դեպք, գովազդի կանոնների խախտման՝ 4 դեպք և մրցակցի հետ անհիմն համեմատման՝ 1 դեպք: (գծանկար 4)

գծանկար 4

Հանձնաժողովի կողմից անբարեխիղճ մրցակցության դրսևորումների վերաբերյալ ընդունված որոշումների դասակարգումն ըստ խախտումների տեսակների



1-ին խումբ խախտումները վերաբերել են ապրանքի փաթեթավորման վրա ապրանքի արտադրության տարեթվի, ամսվա, օրվա, պահպանման ժամկետի և պայմանների վերաբերյալ, տեսակավորման ժամկետի, արտադրող և ներկրող տնտեսվարող սուբյեկտի անվանման և հասցեի վերաբերյալ և օրենսդրությամբ նախատեսված այլ տվյալները թերի նշելով կամ չհիշատակելով, ինչպես նաև հայերեն նշումների (մակնշման), սննդամթերքի հիմնական բաղադրիչների ցանկի բացակայությունը, ինչը հանգեցրել է կամ կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման):

2-րդ խումբ խախտումները վերաբերել են ապրանքում կողմնակի բաղադրիչների առկայությամբ (կաթնաշոռ, մածուն, թթվասեր), որը դիտարկվում է որպես ապրանքի կեղծում), ինչպես նաև իրացման ընթացքում ապրանքի փաթեթավորման վրա թերի, կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշելով (մասնավորապես, կաթնամթերքի որոշ տեսակների յուղայնության վերաբերյալ կեղծ տվյալների (տեղեկությունների) նշումը), կամ այնպիսի տվյալների (տեղեկությունների) բացակայությամբ, որը սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմել ապրանքի վերաբերյալ :

3-րդ խումբ խախտումները վերաբերել են գրանցված անվանումով ապրանքային նշանին նման ապրանքային նշանի օգտագործմամբ առանց իրավատիրոջ համաձայնության, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել սուբյեկտի առաջարկած ապրանքների կամ նրա գործունեության վերաբերյալ շփոթության առաջացմանը:

4-րդ խումբ խախտումները վերաբերել են ձեռնարկատիրական գործունեության ընթացքում տնտեսվարող սուբյեկտի կողմից առաջարկվող ապրանքների արտաքին տեսքն օգտագործելուն, որը սպառողների մոտ կարող է շփոթություն առաջացնել այլ տնտեսվարող սուբյեկտի՝ պատկանող արդյունաբերական նմուշի նկատմամբ, ինչպես նաև ապրանքների ներկայացման ձևերի, այդ թվում՝ գովազդի, ապրանքների մատուցման ոճի նկատմամբ շփոթություն առաջացնող գործողությունների կամ վարքագծի միջոցով:

5-րդ խումբ խախտումները վերաբերել են իրացվող ապրանքում կողմնակի խառնուկների առկայութամբ, որոնք նրանցում չպետք է լինեն համաձայն համապատասխան հաստատված կանոնակարգերի: Նման գործունեությունը նույնպես համարվում է անբարեխիղճ մրցակցության գործողություն՝ հասարակության մոլորեցում և նման գործողության արդյունքում տնտեսվարող սուբյեկտը ստանում է լրացուցիչ առավելություններ շուկայի այլ մասնակիցների նկատմամբ:

6-րդ խումբ խախտումը վերաբերել է տնտեսվարող սուբյեկտի կողմից ապրանքի գովազդման և իրացման ընթացքում այլ տնտեսվարող սուբյեկտի կողմից արտադրվող և իրացվող ապրանքատեսակների հետ անհարկի համեմատություններով՝ (հակաօրինական գովազդը), որը վնասում է կամ կարող է վնասել տնտեսվարող սուբյեկտի համբավը կամ վարկարժեքը (ոչ նյութական ակտիվը) և համարվում է անբարեխիղճ մրցակցության գործողություն:

Անբարեխիղճ մրցակցության դրսևորման բոլոր հայտնաբերված դեպքերի կապակցությամբ Հանձնաժողովը նշանակել է համապատասխան պատասխանատվության միջոցներ, հաշվի առնելով տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տվյալ տնտեսվարող սուբյեկտի կողմից Օրենքի խախտումների կրկնակիությունը, տնտեսվարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսվարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսվարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսվարող սուբյեկտի գործունեության ոլորտը և (կամ) պատմությունը: Հարկ է նշել, որ առավել փոքր շրջանառություն ունեցող փոքր և միջին ձեռնարկատիրությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ պատասխանատվության միջոց է սահմանվել նախազգուշացում: Առավել մեծ շրջանառություն ունեցող տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ՝ հաշվի առնելով նաև վերը նշված հանգամանքները, պատասխանատվության միջոց է նշանակվել յուրաքանչյուր դեպքի համար սկսած 500 հազար դրամ տուգանքից մինչև 20 միլիոն դրամ: Անկախ սահմանված պատասխանատվության ձևից ու մեծությունից Հանձնաժողովի որոշմամբ պատասխանատվության ենթարկված բոլոր տնտեսվարող սուբյեկտներին հանձնարարվել է որոշմամբ սահմանված ժամկետներում շտկել խախտումը և հետագայում չթույլատրել նման խախտումներ, ինչպես նաև տվյալ ապրանքները հանել շրջանառությունից:

Անբարեխիղճ մրցակցության արձանագրված դեպքերի դասակարգումն ըստ ապրանքների և ապրանքատեսակների



Ընդհանուր առմամբ, անբարեխիղճ մրցակցության փաստերով Հանձնաժողովը տուգանել է խախտում կատարած տնտեսվարող սուբյեկտներին 110 միլիոն դրամի չափով: 2011 թվականին Հանձնաժողովը բացահայտել է անբարեխիղճ մրցակցության 112 դեպքեր (71 Հանձնաժողովի որոշում•), որից 78-ը վերաբերում է լայն սպառման ապրանքներին (կաթնամթերք՝ 20, գազավորված ըմպելիք՝ 15, հավի միս և սառեցված հավի մսի տեսակները՝ 12, կարագի անվան տակ սպրեդի իրացում՝ 11, տարբեր տեսակի ապխտած երշիկներ՝ 11, աղացած սուրճ՝ 5 և արհեստական մեղր՝ 4): Նշված

• Անբարեխիղճ մրցակցության դրսևորման դեպքերը ուսումնասիրելիս Հանձնաժողովը հիմնվել է մի շարք իրավական ակտերի, որոնցից են՝
1. «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մաս՝
2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 19-ի «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1560-Ն որոշման 1-ին կետով հաստատված մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի (այսուհետ՝ Տեխնիկական կանոնակարգ) 59-րդ կետի «ժա» ենթակետ
3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» (այսուհետ՝ Կանոնակարգ) 4-րդ կետ
4. «Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մաս
5. «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի «դ» կետ, 8-րդ հոդվածի «դ» կետ:
6. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
11-րդ հոդվածի 2-րդ մաս, 12-րդ հոդվածի 1-ին մաս, 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ, 14-րդ հոդվածի 1-ին մաս և 2-րդ մաս, 15-րդ հոդվածի 1-ին մաս:

խախտումներից մնացած 34-ը վերաբերում են սպասք լվացող միջոցների, սառը սուրճի, շոկոլադե ձողիկների, արագ պատրաստման լապշայի, ապխտած չեչիլ պանրի, մակարոնեղենի, կրեմ օճառի, հավի նրբերշիկի, քարաճիկի, կոտլետների, օղու, ձվի, մանկական խյուսերի, ապակե շշերի, լայնաշերտ ինտերնետի, անտիֆրիզի, ավտոյուղերի, արգելակման հեղուկի, կիվի ապրանքների շրջանառության ոլորտներում և գովազդի ոլորտին:

2011 թվականին անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտման ուղղությամբ իրականացված ուսումնասիրություններից կարելի է առանձնացնել կաթնամթերքի և կարագի շրջանառության ոլորտներում իրականացված ուսումնասիրությունները, որոնք անմիջապես ուղղված են ապառողների շահերի պաշտպանությանը և հասարակական հնչեղության արժանացան հանրապետությունում:

Այսպես, «Աշտարակ կաթ», «Դուստր Մարիաննա» և «Թամարա և Անի» ընկերությունները օրենսդրության խախտումներ են թույլ տվել թթվասերի, կաթնաշոռի, մածնի, կաթի, պանրի և յոգուրտի շրջանառության ոլորտներում: Փորձաքննության արդյունքում «Աշտարակ կաթ» ընկերության կողմից արտադրվող կաթնաշոռում, մածնում և թթվասերում հայտնաբերվել է կոկոսի յուղ, իսկ «Դուստր Մարիաննա» և «Թամարա և Անի» ընկերությունների կողմից արտադրվող թթվասերում լաբորատոր փորձաքննության արդյունքում հայտնաբերվել է բուսական յուղ: «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» համաձայն կաթնաշոռում, մածնում և թթվասերում չեն կարող պարունակվել ոչ կաթնային բաղադրամասեր:

«Աշտարակ կաթ», «Դուստր Մարիաննա» և «Թամարա և Անի» ընկերությունների կողմից նշված ապրանքատեսակների արտադրության համար կոկոսի յուղի օգտագործումն էապես խաթարել է տվյալ ապրանքային շուկայի մրցակցային միջավայրը, քանի որ օգտագործելով էժան հումք՝ ստացել է զգալի առավելություն շուկայում գործող այլ ընկերությունների նկատմամբ: Կոկոսի յուղի գինը զգալիորեն ցածր է կարագի գնից, որն էլ պատճառ է հանդիսացել կաթնամթերքի արտադրության ընթացքում կարագի փոխարեն կոկոսի յուղի օգտագործման համար:

Դրա հետ մեկտեղ, «Աշտարակ կաթ» ընկերության կողմից արտադրվող և իրացվող, ինչպես նաև «Դուստր Մարիաննա» և «Թամարա և Անի» ընկերությունների կողմից արտադրվող և իրացվող կաթնամթերքի մակնշումների համեմատական վերլուծության արդյունքում պարզվել է, որ մակնշումներում ներկայացված և փաստացի առկա յուղայնության մակարդակների միջև կան էական տարբերություններ: Հանձնաժողովը նշված խախտումները որակել է որպես հասարակության մոլորեցում՝ անբարեխիղճ մրցակցության գործողություն: «Աշտարակ կաթ» ընկերության նկատմամբ նշանակվել է տուգանք 50 միլիոն դրամի չափով, «Դուստր Մարիաննա» և «Թամարա և Անի» ընկերությունների նկատմամբ՝ համապատասխանաբար 20 միլիոն և 5 միլիոն դրամի չափով:

Նույն ժամանակահատվածում Հանձնաժողովը կարագի ներկրմամբ և իրացմամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների փաստաթղթաշրջանառության ուսումնասիրությամբ բացահայտվել է, որ մի շարք տնտեսվարող սուբյեկտներ մոլորեցնում են սպառողներին՝ կարագի անվան տակ վաճառելով գնային և որակական առումով կարագից էապես տարբերվող սննդամթերք՝ բուսասերուցքային

սփրեդ, որը տեսքով գրեթե չի տարբերվում կարագից և շատ ավելի էժան է: Հանձնաժողովի դիտարկմամբ, այն տնտեսվարողները, որոնք բուսասերուցքային սփրեդը վաճառել են կարագի անվան տակ անհավասար մրցակցային պայմաններում են հայտնվել բարեխիղճ տնտեսվարողների նկատմամբ՝ ստանալով մրցակցային լուրջ առավելություններ:

Անբարեխիղճ մրցակցության դրսևորման համար այդ տնտեսվարողների նկատմամբ Հանձնաժողովի որոշմամբ սահմանվել է 3 մլն դրամ տուգանք՝ յուրաքանչյուր իրավախախտման նկատմամբ: Տուգանքի ընդհանուր չափը նշված իրավախախտման համար կազմել է 24 միլիոն դրամ: Հանձնաժողովը ուսումնասիրությունների ողջ փաթեթը տրամադրել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը:

Հարկ է նշել, որ անբարեխիղճ մրցակցության դեպքեր բացահայտելու նպատակով Հանձնաժողովը դիտանցումներ է իրականացրել նաև Հայաստանի Հանրապետության մարզերում:

Հանձնաժողովի աշխատանքների արդյունավետության բարձրացմանը էականորեն նպաստել են նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում Հանձնաժողովի նախաձեռնությամբ և Համաշխարհային բանկի օժանդակությամբ օրենսդրական փոփոխությունների իրականացումը: Վերացվել են օրենքում առկա բազմաթիվ սողանցքերը, հստակեցվել են հասկացությունները: Տնտեսվարող սուբյեկտների կողմից գնային չարաշահումների դեմ առավել արդյունավետ պայքար մղելու նպատակով օրենքում հստակ կարգավորում են ստացել գների չհիմնավորված բարձրացման, իջեցման և պահպանման հետ կապված հարաբերությունները: Փոփոխությունների արդյունքում Հանձնաժողովին տրամադրվել են լրացուցիչ գործիքներ՝ հնարավորություն ընձեռելով առավել արդյունավետ վերահսկել ապրանքային շուկաներում մրցակցային միջավայրը, բացահայտել տնտեսվարող սուբյեկտների կողմից տնտեսական մրցակցությունը խաթարող գործողությունները:

Օրենքի փոփոխություններով.

1. Առավել հստակեցվել և խստացվել են օրենքով նախատեսվող տուգանքի չափերը: Մասնավորապես, եթե գործող օրենքով գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության համար սահմանված տուգանքի չափը կազմում էր տնտեսվարող սուբյեկտի՝ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի 2 տոկոսի չափով, ապա փոփոխություններով այդ իրավախախտումների համար տուգանքի չափը կազմելու է հինգից երկու հարյուր միլիոն դրամ, իսկ գների չհիմնավորված բարձրացման հետևանքով ստացված շահույթը գանձվելու է ՀՀ պետական բյուջե: Իսկ անբարեխիղճ մրցակցության համար սահմանված տուգանքի չափը հինգ հարյուր հազար դրամի փոխարեն սահմանվել է տնտեսվարող սուբյեկտի իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև 1 տոկոսի չափով: Սահմանվել են նաև տուգանքի չափի որոշման համար հիմք ընդունվող սկզբունքները և չափանիշները:

2. Օրենքի մի շարք փոփոխություններ ուղղված են Հանձաժողովի ապացուցողական հնարավորությունների ընդլայնմանը: Մասնավորապես Օրենքի փոփոխություններով սահմանվել են դիտանցում և հսկիչ գնում կատարելու իրավասությունը և կարգը:

3. Օրենքում հստակեցվել են որոշ հասկացություններ: Ներմուծվել է գերիշխող դիրքի որոշման որակական չափանիշը, և դուրս է եկել գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների ռեեստրի վարման պարտականությունը: Հստակեցվել են համակենտրոնացումներին և անբարեխիղճ մրցակցությանը վերաբերող դրույթները:

4. Վերացվել են օրենքում առկա բացերը և սողանցքները: Հստակեցվել են գների չհիմնավորված բարձրացման, իջեցման և պահպանման վերաբերող դրույթները, ինչը հնարավորություն կտա ապացուցել տնտեսվարող սուբյեկտների գնային չարաշահումները, քանի որ այս հարցի հետ կապված նախկինում Հանձնաժողովի ներկայացրած ապացույցները դատարաններում խնդիրներ են հարուցել: Կամ օրինակ, եթե գործող Օրենքի խախտում թույլ տված տնտեսվարող սուբյեկտները լուծարվում են և այդ եղանակով խուսափում տուգանքից, ապա Օրենքի փոփոխությունների ընդունումից հետո գերիշխող դիրք ունեցող և մրցակցության օրենսդրության խախտում թույլ տված տնտեսվարող սուբյեկտը կարող է լուծարվել միայն Հանձնաժողովի որոշմամբ:

5. Օրենքի փոփոխություններով մի շարք դրույթներ են նախատեսվել, որոնք ուղղված են Հանձնաժողովի գործունեության օպերատիվությունը, քանի որ գործող օրենքի պայմաններում Հանձնաժողովը հնարավորություն չուներ արագ արձագանքելու մրցակցության օրենսդրության խախտումներին: Հանձնաժողովին տրվել է զգուշացում տալու իրավասություն՝ որպես կանխարգելիչ գործառույթ:

6. Օրենքի փոփոխություններում մի շարք դրույթներ են նախատեսվել նաև առևտրային ցանցերի վերաբերյալ: Մասնավորապես, սահմանվել է առևտրային ցանցի հասկացությունը, առևտրային ցանցը գերիշխող դիրք ունեցող համարելու պայմանները, առևտրային ցանցի կողմից հնարավոր չարաշահումները և այլն, որոնք ուղղված են լինելու առևտրային ցանցերի կողմից մրցակցային օրենքի հնարավոր խախտումների դեմ պայքարին:

Հանձնաժողովը 2011 թվականի ընթացքում իր միջազգային համագործակցությունն ուղղորդել է Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցմանը, օտարերկրյա մրցակցային մարմինների հետ հաստատվող կապերի հիման վրա համագործակցության ընդլայնմանը, տնտեսական մրցակցության քաղաքականության կիրարկման քարոզչությանը, Հանձնաժողովի դերի և գործունեության արդյունավետության բարձրացմանը՝ մասնագետների որակավորման կատարելագործման միջոցով, ինչպես նաև միջազգային պայմանագրերով սահմանված տնտեսական մրցակցության բնագավառին առնչվող պարտավորությունների կատարմանը:

Հանձնաժողովը Առևտրի համաշխարհային կազմակերպության (WTO), ՀՀ-ԵՄ գործընկերության ու համագործակցության համաձայնագրի (ENP), Արևելյան գործընկերության շրջանակում մասնակցել է բանակցային գործընթացներին և ներկայացրել Հայաստանի Հանրապետությունում մրցակցության քաղաքականության կիրարկման ուղղությամբ իրականացվող վերջին զարգացումները:

Բազմակողմ համագործակցության շրջանակներում Հանձնաժողովն, անդամակցելով Միջազգային մրցակցության ցանց (ՄՄՑ) կազմակերպությանը, 2011 թվականին մասնակցել է Նիդերլանդների Թագավորության Հաագա քաղաքում

անցկացված ՄՄՑ-ի 10-րդ հոբելյանական համաժողովին, ինչպես նաև ՄՄՑ-ի կարտելներին առնչվող գիտաժողովին և այցելել են Նիդերլանդների Թագավորության մրցակցային մարմին՝ մասնագիտական փորձի փոխանակման նպատակով: ՄՄՑ-ին անդամակցությունը և վերջինիս աշխատանքային խմբերում իրականացվող աշխատանքները հնարավորություն են ընձեռում Հանձնաժողովին անմիջականորեն մասնակցել միջազգային տնտեսական մրցակցության ոլորտում ծագած խնդիրների լուծման գործընթացին, նպաստել ՀՀ մրցակցության օրենսդրության կիրարկման մեխանիզմների և միասնական տեսակետի ձևավորմանը, ինչպես նաև միջազգային հանրությանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետությունում մրցակցության ոլորտին առնչվող զարգացումներին:

Հանձնաժողովը, ԱՊՀ անդամ պետությունների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի (Խորհուրդ) աշխատանքների շրջանակներում 2011 թվականին մասնակցել է Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում կայացած Խորհրդի 33-րդ արտահերթ, Տաջիկստանի Հանրապետության Դուշանբե քաղաքում կայացած Խորհրդի 34-րդ հերթական, իսկ Ղազախստանի Հանրապետության Ալմաթի քաղաքում կայացած Խորհրդի 35-րդ հերթական, Խորհրդի ներքո գործող ԱՊՀ անդամ պետություններում հակամենաշնորհային օրենսդրության խախտման համատեղ ուսումնասիրությունների շտաբի (Շտաբ) 16-րդ և 17-րդ նիստերին, ինչպես նաև Խորհրդի ներքո Գովազդի կոորդինացիոն խորհրդի 7-րդ նիստին և «Սպիտակ քառակուսի» գովազդի ու մարքեթինգի միջազգային փառատոնին: Հարկ է նշել, որ Հանձնաժողովի ստեղծման 10-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում Շտաբի 16-րդ նիստը կազմակերպվել է Երևան քաղաքում, որին մասնակցել են Հանձնաժողովի, ԱՊՀ անդամ պետությունների մրցակցային մարմինների, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի վարչության, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, միջազգային կազմակերպությունների (OECD, WB, OSCE, UNIDO, GIZ, UNCTAD և USAID) և վերոնշված ոլորտների տնտեսվարող սուբյեկտների ներկայացուցիչներ: Շտաբի նիստը նման ձևաչափով կազմակերպվել է առաջին անգամ և բարձր է գնահատվել, ինչի մասին Խորհրդի քարտուղարը զեկուցել է Մոսկվա քաղաքում կայացած Խորհրդի 33-րդ արտահերթ նիստում և Խորհրդի անունից առանձնահատուկ շնորհակալություն է հայտնել Հանձնաժողովին՝ «գերազանց կազմակերպած և անցկացված միջոցառման» համար: Միևնույն ժամանակ, ԱՊՀ գործադիր կոմիտեի նախագահի, ԱՊՀ գործադիր քարտուղար Ս. Լեբեդևի կողմից և Ռուսաստանի Դաշնության Դաշնային հակամենաշնորհային ծառայության ղեկավար Յու. Արտեմևի կողմից Հանձնաժողովի հոբելյանական միջոցառումների շրջանակում Հանձնաժողովի նախագահը, անդամները և աշխատակազմի աշխատակիցները պարգևատրվել են հակամենաշնորհային կարգավորման և մրցակցության պաշտպանության բնագավառում ներդրած ավանդի համար:

Խորհրդի աշխատանքների շրջանակում ՀՀ էներգետիկայի նախարարության հետ համատեղ մշակվել և ներկայացվել է Հայաստանի Հանրապետությունում առկա իրավիճակի և իրականացվող քայլերի վերաբերյալ տեղեկատվություն՝ «ԱՊՀ անդամ պետություններում էներգետիկայի ոլորտում իրականացվող բարեփոխումների և

հակամենաշնորհային մարմինների դերը էլեկտրաէներգիայի շուկայում մրցակցության բարելավման խնդրում» զեկույցում ներառելու նպատակով:

Հանձնաժողովը, հաշվի առնելով ԵՄ-Հայաստան ԵՀՔ գործողությունների ծրագրի «Մրցակցային քաղաքականության» ներքո նախանշված պետական օժանդակության համակարգի հիմնադրման և օրենսդրության համապատասխանեցման հանձնառությունը, մշակել և 2011 թվականի հունվարից իրականացնում է «Մրցակցային և պետական օժանդակության օրենսդրության կիրարկման հզորացումը Հայաստանում» թվինինգ ծրագիրը (Թվինինգ ծրագիր): Թվինինգ ծրագրի ԵՄ գործընկեր անդամ պետություններն են Գերմանիան և Լիտվան: Թվինինգ ծրագրի համընդհանուր նպատակն է նպաստել Հայաստանում մրցակցային միջավայրի բարելավմանը՝ ընդլայնելով Հանձնաժողովի լիազորությունները և զարգացնելով մրցակցային և պետական օժանդակության օրենսդրության կիրարկման կարողությունները:

Ծրագրի հատուկ նպատակներն են՝

- Հայաստանի մրցակցային և պետական օժանդակության վերահսկողության օրենսդրության համապատասխանեցում ԵՄ ստանդարտներին.
- Հանձնաժողովի վարչական կարողությունների հզորացում՝ արժանահավատ որոշումներ կայացնելու և դրանք պատշաճ իրականացնելու նպատակով.
- Հանրության իրազեկում մրցակցության և պետական օժանդակության սկզբունքների մասին:

Թվինինգ ծրագրով նախատեսված գործողությունների իրականացման նպատակով՝ ծրագրի փորձագետները մշակել և Հանձնաժողովին են ներկայացրել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրամշակումներ կատարելու առաջարկություններ և «Պետական օժանդակության վերահսկման մասին» ՀՀ օրենքի նախագիծ, ինչպես նաև նոր տեղեկատվական բազայի ստեղծման հայեցակարգ: Թվինինգ ծրագրի շրջանակում կարճաժամկետ փորձագետներն իրականացրել են Հանձնաժողովի ինստիտուցիոնալ կարողությունների գնահատում և դրանց վերաբերյալ ներկայացրել փորձագիտական զեկույցներ:

Թվինինգ ծրագրի շրջանակներում իրականացվել են մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝ Հանձնաժողովի աշխատակիցներն ուսումնական այցով մեկնել են՝

- Գերմանիայի Դաշնային Հանրապետություն՝ ԵՄ անդամ պետության մրցակցային մարմնի գործունեությունը ուսումնասիրելու,
- Ֆրանսիայի Հանրապետություն՝ ծանոթանալու ԵՄ լավագույն գործելակերպին հանրային կապերի ոլորտում, «մրցակցային մշակույթի» ձևավորման ԵՄ պահանջներին և մոտեցումներին,
- Լիտվա՝ ԵՄ անդամ պետության մրցակցային մարմնի կիրարկման գործելակերպի վերաբերյալ համակողմանի գիտելիքներ ձեռքբերելու և փորձի փոխանակման նպատակով:

Հարկ է նշել, որ Թվինինգ ծրագրի աջակցությամբ Հանձնաժողովի աշխատակիցները մասնակցել են նաև՝ Նիդերլանդների Թագավորության քաղաք Հաագայում կայացած ՄՄՑ-ի 10-րդ հոբելյանական համաժողովին և Ֆրանսիայի Հանրապետության Փարիզ քաղաքում կայացած ՏՀԶԿ-ի մրցակցության հարցերով 10-րդ Գլոբալ ֆորումին:

Թվինինգ ծրագրի շրջանակներում Հանձնաժողովի պաշտոնյաների, աշխատակիցների, շահագրգիռ պետական մարմինների, դատավորների և տնտեսական ոլորտը լուսաբանող լրագրողների մասնակցությամբ կազմակերպվել են մրցակցային օրենսդրության, պետական օժանդակության խնդիրներին առնչվող ուսուցում աշխատավայրում, կլոր սեղան ձևաչափով քննարկումներ և սեմինարներ: Սեմինարների կազմակերպման աշխատանքների գործում Հանձնաժողովին աջակցել է նաև ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) երևանյան գրասենյակը՝ սեմինարների անցկացման համար տրամադրելով համաժողովների դահլիճ:

Հանձնաժողովը, կարևորելով համագործակցությունը Գերմանիայի միջազգային համագործակցության (ԳՄՀ/GIZ) ընկերության հետ՝ «Մասնավոր հատվածի զարգացումը Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում, նպատակ ունենալով խթանել մրցակցային օրենքի և քաղաքականության, այն կիրառող մարմինների, կառավարության, ոլորտային կարգավորողների և լրագրողների կարողությունների զարգացումը, կազմակերպել է մի շարք սեմինարներ ԳՄՀ-ի փորձագետների, ինչպես նաև Երևանի տնտեսագիտական համալսարանի ուսանողների համար՝ «Անցումային տնտեսություններում մրցակցային քաղաքականության մշակումը» թեմայով դասախոսություն պրոֆեսոր Վիլյամ Կովաչիչի մասնակցությամբ: Պրոֆեսորը հանդիպումներ է ունեցել ՀՀ վարչապետի և ՀՀ էկոնոմիկայի նախարարի հետ և քննարկել Հայաստանի Հանրապետությունում մրցակցային քաղաքականության մշակմանն առնչվող հարցեր:

ԳՄՀ-ի աջակցությամբ Հանձնաժողովի պատվիրակությունը 2011 թվականին մեկնել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բեռլին քաղաք՝ մասնակցելու Մրցակցային հարցերով 15-րդ միջազգային համաժողովին:

ԳՄՀ-ի փորձագետների հետ համատեղ Հանձնաժողովի և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մասնագետների մասնակցությամբ կազմակերպվել է «Մրցակցային խնդիրները հեռահաղորդակցության ոլորտում» թեմայով սեմինար: ԳՄՀ-ի և Հանձնաժողովի միջև կնքված փոխըմբռնման հուշագրի գործողությունների ծրագրից ելնելով՝ Հանձնաժողովի աշխատակիցների մասնագիտական կարողությունների բարձրացման նպատակով կազմակերպվել է «Անբարեխիղճ մրցակցությունը գովազդում» թեմայով սեմինար:

ԳՄՀ-ի հետ համագործակցության շրջանակում Հանձնաժողովի աշխատակիցները մասնակցել են անգլերեն լեզվի ուսուցման, «Ձեռնարկությունների հաշվապահական հաշվառում և Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներ» թեմայով վերապատրաստման և վերլուծությունների ընթացքում էկոնոմետրիկ մեթոդների կիրառման գործնական դասընթացներին:

Հանձնաժողովը բանակցություններ է վարել Միացյալ ազգերի կազմակերպության առևտրի և զարգացման հարցերով համաժողովի (UNCTAD/ՄԱԿԱԶԿ) ներկայացուցիչների հետ «Գերիշխող դիրք. խնդիրները և հետևանքները» թեմայով սեմինար և միջազգային համաժողով կազմակերպելու համար՝ ուղղված ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման հարցերով համաժողովի կողմից կազմված «Հայաստանի օրինակով մրցակցության օրենքի և քաղաքականության վերաբերյալ կամավոր փորձագիտական գնահատման զեկույցի» արդյունքների

ներկայացմանը: Դրանք կազմակերպվել են Հանձնաժողովի հիմնադրման 10-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումների հետ համատեղ:

Հանձնաժողովի հոբելյանական միջոցառումներին մասնակցելու նպատակով աշխատանքներ են կատարվել ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման հարցերով համաժողովի գլխավոր քարտուղար Սուպաչայ Պանիտչպակդիի այցը Հայաստանի Հանրապետություն կազմակերպելու համար: Հանձնաժողովը կազմակերպել է նաև ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման հարցերով համաժողովի գլխավոր քարտուղարի առանձին հանդիպումները Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Վարչապետի, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարների, ինչպես նաև ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի մշտական համակարգողի հետ:

ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովի առաջարկով «Հայաստանի օրինակով մրցակցային քաղաքականության փորձագիտական գնահատում» թեմայով զեկույցի շրջանակներում և ելնելով Հայաստանի փորձից՝ Հանձնաժողովը Կամավոր փորձագիտական գնահատում իրականացնող ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովի փորձագետներին շարունակել է աջակցել Զեկույցի/ների մշակման գործընթացում (Սերբիա, 2011թ.):

2011 թվականին Հանձնաժողովը մասնակցել է Շվեյցարիայի Համադաշնության քաղաք Ժնևում կայացած ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման հարցերով համաժողովի «Մրցակցության օրենքի և քաղաքականության վերաբերյալ» փորձագետների միջկառավարական խմբի 11-րդ նիստին:

Հանձնաժողովի մշտական ուշադրության կենտրոնում է կայուն զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, որոնք նպաստում են մրցակցային միջավայրի բարելավմանը, մրցակցային քաղաքականության կիրարկման արդյունավետ մեխանիզմների զարգացմանը: Հանձնաժողովը 2011 թվականի ընթացքում շարունակել է համագործակցել Համաշխարհային բանկի հետ «Հայաստանի Հանրապետության զարգացման քաղաքականության վարկի (ԶՔՎ) երրորդ ծրագրի նախապատրաստման կանխավճարի թիվ ՄԶԸ Ք670-ԱՄ» վարկային ծրագրի շրջանակում «Մրցակցության քաղաքականության կարգավորիչ դաշտի հզորացում» տեխնիկական աջակցության ծրագրի ներքո:

Համագործակցության շրջանակում աշխատանքներ են իրականացվել Հունգարիայի և Չեխիայի Հանրապետության մրցակցության մարմինների պատասխանատուների հետ կազմակերպելու Հանձնաժողովի երկու աշխատակցի այցը վերոնշյալ պետությունների մրցակցային մարմիններ՝ փորձի փոխանակման նպատակով:

Հանձնաժողովը 2011 թվականի ընթացքում շարունակել է համագործակցությունը Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության մրցակցության հարցերով Բուդապեշտի տարածաշրջանային ուսումնական կենտրոնի (ՏՀԶԿ ՄՏԿ/OECD-GVH RCC) հետ: Արևելյան, Հարավ-արևելյան և Կենտրոնական Եվրոպայի տարածաշրջաններում մրցակցային քաղաքականության կիրարկման արդյունավետությունը բարձրացնելու համագործակցության ծրագրի շրջանակներում Հանձնաժողովի աշխատակիցները մասնակցել են մրցակցային քաղաքականության իրականացմանը, շուկայում գերիշխող դիրքի չարաշահմանը,

համակենտրոնացումներին և հակամրցակցային համաձայնություններին վերաբերող սեմինարներին և գիտաժողովներին:

Հանձնաժողովն իր իրավասության շրջանակներում բանակցել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) ներկայացուցիչների հետ՝ Հանձնաժողովին ներգրավել վերջիններիս կողմից կազմակերպվող մրցակցության հարցերով գլոբալ ֆորումի աշխատանքներին: Բանակցությունների արդյունքում ՏՀԶԿ-ն առանձնահատուկ ընթացակարգ է ընդունել Հայաստանի Հանրապետության համար, չլինելով լիազորված մասնակից պետություն, ի դեմս Հանձնաժողովի՝ առանձնահատուկ կարգավիճակով մասնակցել ֆորումի աշխատանքներին: Հանձնաժողովի պատվիրակությունը 2011 թվականին մասնակցել է Փարիզում (Ֆրանսիայի Հանրապետություն) կայացած ՏՀԶԿ-ի մրցակցության հարցերով 10-րդ Գլոբալ ֆորումին:

ՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆՄԶԳ/USAID) համագործակցության շրջանակներում Հանձնաժողովը բանակցություններ է վարել համատեղ գործողությունների ծրագրի մշակման և տեխնիկական աջակցության տրամադրման ուղղությամբ: Մասնավորապես, բանակցությունների արդյունքում համաձայնություն է ձեռք բերվել Հանձնաժողովում նոր տեղեկատվական համակարգի ներդրմանն աջակցելու հարցում:

Հանձնաժողովը ԱՄՆ ՄԶԳ-ի հետ միասին նախատեսում է իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման համատեղ ծրագիր, որը կնպաստի ԱՄՆ Դաշնային առևտրի հանձնաժողովի հետ համագործակցության ընդլայնմանը: Տվյալ ծրագրի նախապատրաստման և մշակման աշխատանքները կազմակերպելու նպատակով 2011 թվականի դեկտեմբերին Երևան է ժամանել ԱՄՆ ՄԶԳ-ի փորձագետ, ԱՄՆ Դաշնային առևտրի հանձնաժողովի միջազգային համագործակցության դեպարտամենտի տնօրենի տեղակալ պարոն Ռասսել Դամթոֆթը: Նախատեսվող ծրագրային ուղղությունները հստակեցնելու և համապատասխան առաջարկներ ձևավորելու համար կազմակերպվել են մի շարք հանդիպումներ Հանձնաժողովի նախագահի, Հանձնաժողովի անդամների և աշխատակիցների, ինչպես նաև այն շահագրգիռ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որոնք Հանձնաժողովի հետ իրականացնում են համատեղ ծրագրեր:

Մասնագիտական կարողությունների զարգացման նպատակով՝ Ճապոնիայի միջազգային համագործակցության կազմակերպության (JICA) և ՀՀ Արտաքին գործերի նախարարության հետ համագործակցության շրջանակներում 2011 թվականի հոկտեմբեր ամսին «Մրցակցության քաղաքականություն և օրենք» թեմայով ուսումնական ծրագրով Հանձնաժողովի աշխատակիցը մասնակցել է Ճապոնիայում (Օսակա, Տոկիո) անցկացված մեկամսյա ուսուցման դասընթացներին:

3.1) մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկների իրականացման ընթացքի վերլուծությունը.

(նախատեսված է ներկայացնել 2012 թվականի արդյունքներով)

Գլուխ 4. Հանձնաժողովի 2011 թվականի գործունեության ֆինանսական հաշվետվություն

Հայաստանի Հանրապետության 2011 թվականի բյուջեով, որպես Հանձնաժողովի աշխատակազմի պահպանման ծախս նախատեսվել է 215350.5 հազար դրամ:

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի Անվանումները	Տարեսկզբին հաստատված տարեկան նախահաշիվ	Դրամարկղային ծախս
Ընթացիկ ծախսեր	215350.5	215350.5
-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	160089.6	160089.6
-Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում	6782.9	6782.9
-Վճարներ Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին	20865.2	20865.2
-էներգետիկ ծառայություններ	4094.9	4094.9
-Կոմունալ ծառայություններ	221.7	221.7
-Կապի ծառայություններ	6581.5	6581.5
- Ապահովագրական ծախսեր	160.0	160.0
-Ներքին գործուղումներ	1136.8	1136.8
-Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	5129.5	5129.5
-Տեղակատվական ծառայություններ	727.8	727.8
-Ներկայացուցչական ծախսեր	500,0	500,0
-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	776.8	776.8
-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	2382.0	2382.0
-Գրասենյակային նյութեր և հագուստ	1420.7	1420.7
-Տրանսպորտային նյութեր	4000.0	4000.0
-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	137.1	137.1
-Հատուկ նպատակային այլ նյութեր	300.0	300.0
-Այլ հարկեր	5.0	5.0
-Պարտադիր վճարներ	39.0	39.0